տողը մի հավելյալ ապացույց է, որ դրանք գրված են 1903 թ. առաջ (այդ թվականին հրատարակված ՀՄխ I-ում, էջ 10, № 6, երգի I-ին տողն է «Գութանը հաց եմ բերում»): 398-ում մյուս տարբերակներից առանձնանում է 8բ էջինը, որտեղ երգի 2-րդ կեսում շարադրությունն «աշխուժացված» և հարմոնիան բավմապան է դարձված: Բերված է տարբերակներում (Բ):

472-ի երկու տարբերակներից մեկը քառաձայն է (I-ին նախադասության մեջ տենորը և բասը՝ ունիսոն), մյուսը՝ եռաձայն: Դրանք կպետեղվեն դպրոցական երգչախմբերի հատկացված դաշնակումների մեջ: Եռաձայնն այստեղ բերվում է ցույց տալու համար, թե որքան խիստ սահմանափակ միջոցներով է բավարարվել հեղինակը, երգչախումբը պարզ, բայց վայելուչ հնչեցնելու համար:



Այս տարբերակներում մեղեդին բաժանված է տակտերի, բայց մետրական ձևակերպումը անհամոզիչ է, քանի որ բնական վիճակում մեղեդին սկավում է ուժեղ մասից և նրանում հաջորդափոխվում են եռամաս ու երկմաս տակտերից կազմված ֆրազներ:

391/43-ը, որ նույնպես էջմիածնական վաղ շրջանի է, հիշեցնում է 398/8բ-ն, բայց ներդաշնակության մեջ նրանից պակաս հետաքրքրական է, խոսք կամ վերնագիր գրված չեն (չի բերվում): Այստեղ մեղեդին 3/4-ով բաժանված է տակտերի:

Թժ/4-ում երգը նման է մի քանի այլ բնագրերի (2-րդ կեսն ընթանում է տոնիկայի բասի վրա), խոսքերը՝ «Գութանը հաց եմ բերում»:


Հաջորդ բնագրերը համեմատաբար ուշ ժամանակի են: 416-ում և 406-ում **մի** և **ռե մաժորում** իգական եռաձայն խմբի համար դաշնակելու փորձեր են: Առաջինն անավարտ, իսկ երկրորդում 2-րդ ալտի մասը տենորներին է վերահանձնված, ավարտվում է դոմինանտային կվինտակորդով, կրճատված է «Օրոր, Ադինո» խմբերգը (ԵԺ I, էջ 178): Նույն էջին «Գութան»-ի մեներգային մշակման ուրվագրեր կան (այդ մշակումն, ինչպես հայտնի է, արված է 1911 թվականին): Ջետեղված է տարբերակներում (Գ), բերվել է նաև ԵԺ I-ում, «Օրոր, Ադինո» խմբերգի ծանոթագրության մեջ: Մեղեդին այստեղ ստացել է իր վերջնական մետրական ձևակերպումը, խոսքերն էլ վերջնական ձևով են:

392/3բ-ում **սի մաժոր** քառաձայն (նաև՝ սկիզբը եռաձայն՝ S. T. B.) անավարտ ուրվագրեր կան, ներդաշնակությամբ ընդհանուր առմամբ նման մի քանի նախորդներին:

Բավմաթիվ տարբերակների մեջ որպես ամենակատարյալը ներկայանում են 554ա-ն և 394/10բ-ն: Նախապես միմյանց նման են եղել, հետո երկուսն էլ փոփոխվել են: 554ա-ն Տարբերակներում (Դ), 394/10բ-ն, հայկական ձայնանիշերով ուղղումները հաշվի առնված, կետեղված է հատորի հիմնական մասում: Այս փոքրիկ խմբերգի բավմաթիվ տարբերակները, այլ օրինակների հետ միասին, ցույց են տալիս ժողովրդական երգի դաշնակմանը Կոմիտասի մոտեցման ողջ լրջությունը իր գործունեության դեռևս վաղ շրջաններում:

13. **Նանիկ, նանանիկ.** 394/7բ և 11. Առաջինը նախնականն է, երկրորդում ներդաշնակման սկզբունքը և էությունը նույնը թողնելով, ձայնատարությունը բարելավել է: Այստեղ մեներգային մասի **ֆա** և **սոլ** հնչյունների փոխարեն 7բ էջում միայն **ֆա** է: 7բ էջում այս երգի մոտ գրված է՝ ա., 10բ էջում կա՝ բ. «Յաման, մեր բաղի բանդեն» պարերգը առանց դաշնավորումի, նույն էջում գրված է՝ գ. «Աձրևն եկավ» բոլորն էլ մաժոր լադում: Կասկածից վեր է, որ երեք երգերը միակցելու մտադրություն է ունեցել, միակցման հիմքը նրանց մետրի, ռիթմի, տեմպի և տրամադրության հակադրությունն է եղել:

14. **Լուսնակը սաթի տակին:** 398/6, 6բ, 7, 7բ, 8, 405/2բ, 423/3 և 407/30 (կիսատ): 398-ում թե՛ ժողովրդական մեղեդին և թե՛ դաշնակը երկու տարբերակ ունեն: Երկուսն էլ պարզունակ՝ բերվում են ստորև, երգի մշակման աստիճանական կարգացումը ցույց տալու համար: Հետաքրքրական է, որ մեղեդիի I-ին տարբերակի սկիզբը նման է (թեև լադային այլ երանգ ունի) «Լուսնակն անուշ» երգին, որը, սակայն, նույն 398 տետրում առանձին, եռաձայն լրիվ դաշնակված վիճակում կա (տե՛ս ԵԺ II/229):


Larghetto ♩= 66
S.
A.
T.
B.
p
♩=66
p
Ջա - ղա-ցիս ա - ջի կու - ռը. յա՛ր. յա՛ր.
cresc.
dim.
p
յար. ցա՛յ. ցայ. ցա՛յ. ցա՛յ. յար. ցա՛յ. ցայ, ցա՛յ. ցա՛յ.
p
cresc.
p
mf
p
կը - ցըց-ծա մի-ջի գյու-ղը. յա՛ր. ժա-կե - տով յա - րըս.



Առաջինում խոսքեր չկան, երկրորդում այն խոսքերն են, որոնք Կոմիտասը գրի է առել երգը ձայնագրելիս: Սրանք, ինչպես և 405/2բ տարբերակը ավելի վաղ են գրված, քան ՀՄԽ I-ի տպագրությունը (1903), որտեղ երգի խոսքերը վերջնական տեսքն ունեն (էջ 25, № 22):

405 ծոցատետրում գտնվում է վերը բերված 2-րդ տարբերակի փոքր-ինչ վերամշակված, խմբագրված տեսակը, «Լուսինը սարի տակին» խոսքերով: Այս մշակումը կվետեղվի դպրոցական խմբերգերի մեջ:


Ներկա հատորի հիմնական մասում վետեղված է 423/3 մշակումը, որ անհամեմատ ուշ ժամանակի է, բայց դարձյալ Էջմիածնում գրված: Հայկական ձայնանիշերով հեղինակի ուղղումները նկատի են առնված: Պոլիֆոնիայի հարստությամբ, ձայների ինքնուրույնությամբ այս տարբերակում գեղարվեստական ավելի նշանակալից խնդիրներ են լուծվում: Մշակման ոճով դա մոտենում է ՀՔ երգերին, եպրափակում Կոմիտասի ստեղծագործական-ոճական «Հայ քնար»-յան շրջանը: Նույն մեներգը, չնայած խմբերգի հետ մի շարք ընդհանրությունների (տոնայնությունը և ներդաշնակության ու պոլիֆոնիայի որոշ տարրեր), համեմատաբար ուշ է գրված (1911, տե՛ս ԵԺ I, էջ 119 և 188): Պոլսում ևս Կոմիտասն անդրադարձել է այդ խմբերգին, 407/30-ում կա իգական քառաձայն մի տարբերակ (սկիզբը միայն), որին մտադիր է եղել կցել «Նոր եմ նոր մածուն մերել»-ը:


15. Եկեք տեսեք ինչն է կերի վինչ. Լայնորեն տարածված միջնադարյան հնագույն երգի այս մեղեդին հատկանշական է իր ոճական ավանդականությամբ: Մշակման բնագրերը՝ 441/5բ, 6բ և 568/32բ, Պոլսի շրջանի ձեռագրեր: 441/5բ՝ ալտ և երկու տենոր ձայների համար նախատեսված եռատող պարտիտուրում միայն ալտի տողին անավարտ գրված է մեղեդին, 6բ էջում քառաձայն խմբի համար թանաքով մաքուր և լրիվ գրված մշակումն է, վերևից ունի՝ «Աղեքսանդրիա, 1911, 19/Ե, ն[որ] տ[ոմարով]»: Խոսքերը գրված են (2-րդ և հաջորդ տները պայմանական կրճատ ձևով): Վերջում գրված է «Մշո ոճ»:

568 մեծադիր նոտային տետրում, ՀԳԵ մեներգերի սևագրությունների մեջ (նույն տեղում՝ նաև «Կռունկ»-ի և «Շողեր ջան» մեներգի սևագրությունները), 32բ էջում, երգչախմբի նույնպիսի կազմի համար կա մի երկրորդ բնագիր, գրված նույն թանաքով, ինչ որ նախորդը, ուրեմն դարձյալ Աղեքսանդրիայում: Էական տարբերությունն այն է, որ խմբերգի 2-րդ և 3-րդ ֆրազներն իրենց նախորդներից հետո հանդես են գալիս անընդմիջորեն: Այսպիսով, այս տարբերակում խմբերգն ավելի ընդարձակված է: 441-ինը վետեղված է հատորի հիմնական մասում, իսկ 568-ինը՝ Տարբերակներում, հայկական ձայնանիշերով ուղղումները նկատի են առնված: 441-ում եղող նշումներից երևում է, որ նախապես մտադիր է եղել ամեն մի տան մեջ հարց և պատասխան ֆրազները ըստ ձայների մի նոր հաջորդականությամբ հանդես բերել (ինչպես, օրինակ, Հարսանեկան շարում է), բայց այս մտադրությունը չի իրագործել: 1911 թվականին Աղեքսանդրիայի համերգում այս խմբերգին կից կատարվել են՝ «Շորորա» և «Հով լինի» (ԵԺ II): ՁՏ II-ում (էջ 31) կոչվում է «Բարեկենդանի երգ»:

Այս երգը (մասնավորապես՝ խոսքերը) ժողովրդի մեջ տարածված է բավմաթիվ և բազմազան տարբերակներով: Երկու տարբերակ կա ՀՄԽ-ում (I, էջ 56, № 47 և II, էջ 59, № 33):

Մշո տարբերակի գրառումը (315/13) և հատորում դրված մշակումը ապագրական և գեղ սրվեստական մեծ հետաքրքրականություն ունեն: Անշուշտ, կատարման ժամանակ պետք է հաշվի առնել և հարապատորեն վերարտադրել ա՛յդ ոճը, մասնավորապես՝ «կոտրտված» մեղեդիական գծի ամեն մի բեկումը, սուր, ընդգծված ռիթմը: Մուշի ոճով այդ երգի առանձնահատկությունները պարզ նկատվում են, երբ համեմատում ենք, օրինակ, Վանի տարբերակի հետ (302, էջ 66, № 327), որտեղ մեղեդիական գիծը շատ ավելի սահուն է, ռիթմը՝ հանգիստ (ստորև բերվում է հատվածը):






16. **Կայնել ես, կանչում էլ չես.** Այն մշակումներից է, որոնց երկար ժամանակ հատկացրել և բավ-միցս անդրադարձել է Կոմիտասը: Բնագրերը՝ 405/1, Թժ/8, 405/3բ, 396/2բ և 3, 419/4, 423/1բ և 2, 402/52, 441/17, 22բ, 23բ:

405/1բ, 3 և Թժ էջմիածնական վաղ շրջանի են, 396-ը համեմատաբար ուշ, 419-ը դաշնամուրային պարերի էջմիածնական շրջանի բնագրի թերթերից մեկի վրա թերևս ուշ գրվածք է (երգի 2-րդ կեսը միայն, բայց արդեն վերջնական մշակման սկըզբունքով արված), 423-ը Էջմիածնի վերջին շրջանի է, մյուսները Պոլսում արված աշխատանքներ են: Վաղ մշակումները քառաձայն հարմոնիկ դաշնակում ունեն,՝ պոլիֆոնիայի չափապանց կուսպ կիրառված տարրերով միայն, հետագայի մշակումները 5—7 ձայնանի պոլիֆոնիկ են, կոմիտասյան պոլիֆոնիայի գեղեցիկ նմուշներից: Սկզբնական մշակումներում տոնայնությունը **դո** է, հետո բարձրացրել է **մի-բեմոլի**, վերջում նորից դարձել է **դո**-ի: Ընդհանուր առմամբ երգի մշակումը նշանակալից էվոլուցիա է կրել: Վաղ մշակումները համեմատաբար աղքատիկ են, բայց դրանք ևս ինքնուրույն գեղարվեստական արժեք ունեն, կվետեղ-ւեն դպրոցական երգերում, 405/3բ-ն բերվում է այս հատորի Տարբերակներում (Ա): 396-ում վեցաձայն **մի-բեմոլ մաժոր** երկու տարբերակ կա (2S.A. 2T.B.): Մեկում տենորի բարձրացող ֆրազը բասի երգամասում է, 2-րդը կրում է մատիտով փոփոխություններ, որոնք այն մոտեցնում են 423-ին: 423-ում գրված է մի ամբողջական մշակում (նույնպես 6-ձայն **մի-բեմոլ մաժոր**), որ այս կամ այն չափով տարբեր է վերջնականից և բերված է հատորի հավելվածում (Բ), հեղինակի՝ հայկական և եվրոպական ձայնանիշերով ուղղումները հաշվի են առնված: 402/52-ի ավարտված տարբերակը (6-ձայն) նման է մեկ կողմից՝ 423/1բ-ին, բայց տերցիա իջեցված, մյուս կողմից՝ շատ բանով նման է 441/22բ-ին, որը 402/52-ի հերթական բարելավումն է: Չի բերվում: Վերջապես, 441-ում կան մեկը մյուսի բարելավումը ներկայացնող երեք **դո-մաժոր** տարբերակներ. էջ 17՝ սկզբնականն է, առաջին երկու ֆրազների վերջին հնչյունները երկարացրել է, հետո այդ տեղերում գոյացել են բասի արձագանքները, չափը անկանոն է, գրված է՝ «8/4-ի վերածել»: Երկրորդ տարբերակը (էջ 22բ) հետաքրքրական է նրանով, որ երգի առաջին կեսում միայն կանացի խումբ է, երկրորդ կեսում ավելանում են տենորները, իսկ բասերը միայն մի փոքր ֆրազ են երգում: Այս տարբերակը փոքր-ինչ պարզունակ է, բայց յուրատեսակ թափանցիկ հընչում ունի: Այստեղ ևս նշում կա առաջին երկու ֆրազների վերջին հնչյունները երկարացնելու մասին: Բերվում է ստորև:





423-ի երրորդ տարբերակը վերջնականն է, բոլորից կատարյալը: Չափը ոչ թե 8, բայց 4/4 է ստացվել ավելացված արձագանքային կենտ տակտերի պատճառով (արձագանքները հայկական ձայնանիշերով են գրված): Խոսքերից միայն կըրկնակն է, որ քավական է դառնում ՀՄԽԼ-ի օգնությամբ (էջ 20, № 16) ամբողջը վերականգնելու համար: Այստեղ գտնվող 3-րդ քառատողը, որ «Գնա, գնա» երգի խոսքերի կրկնությունն է, ներկա հրատարակության մեջ երգից դուրս է թողնված:

Հավանաբար այս տարբերակը Կոմիտասն ունեցել է մաքուր արտագրված վիճակում: Այստեղ, ինչպես և 396-ի 1-ին տարբերակում հատուկենտ երանգանիշեր կան նշված:

Կոմիտասի հայտագրերում այս խմբերգն ունի հետևյալ վուգակցումները (կատարվել է դեռևս 1905-ի Թիֆլիսի համերգում).

Գարուն ա—Կայնել ես,
Կայնել ես—Խոսմար,
Գարուն ա—Կայնել ես—Խոսմար

17. **Հինգ էծ ունեմ (Ծաղրերգ աղքատության).** Ժողովրդական մեղեդին ձայնագրել է S. Չիթունու երգածից 1909 թվականի սեպտեմբերի 11-ին Էջմիածնում (313/13), մշակելիս թեթև խմբագրել է:

Մշակման բնագրերն են՝ 402/42, 442/42 և 443/12, կա նաև ՀԺԵ VIII-ում: 402/42-ը մաքուր մատիտագիր է, սակավաթիվ ուղղումներով: Հետաքրքրական է հարմոնիան. միատոնախական մաժոր և մինոր հաջորդականությունը Կոմիտասի համար բացառիկ երևույթ է, այս դեպքում գեղեցիկ է հնչում: Բնագրում իր դիտողությունը կա՝ «Մեկ հատած [տակտ] առանց երգի A. T. և B., սկիզբն ու վերջը»: Սակայն, երգի վերջում մեղեդին ընկերակցող ալտի, տենորի և բասի «դիմիլի»-ները, որ նախապես գրած է եղել, ինքն էլ մատիտով խաչել է: Այդ պատճառով հատորում հավելյալ նախաբան և վերջաբան «ակոմպանեմենտային» տակտեր չեն գրված, թեև հեղինակի դիտողությունը կա տեղված է նոտաներում: Չնայած դրան, միանգամայն հնարավոր է երգի սկզբում և վերջում մեկական կամ երկուական տակտ, «իմիլի-դիմիլի» կատարել, օգտագործելով այդ նպատակի համար I-ին տակտի հարմոնիան: Դա կսրի երգի ծաղրական բնույթը: Բնագրում հեղինակի նշած «Այծի ձայն» դիտողությունը նշանակում է, որ երգը կատարելիս պետք է առաջ բերել ձայնանմանողական որոշ պաներ:

442 և 443-ը նախորդից որոշակիորեն տարբեր են՝ «ակոմպանեմենտային» մասի ռիթմի պարզությամբ:

442/42-ում տոպրանոյի ձայնառությունը բնագրում միայն տողակպքին, մեկ ամբողջ նոտայով է նշանակված: Քանի որ վրան ֆերմատա է դրված, մենք վերծանեցինք, վետեղելով այդ ձայնը, այնուամենայնիվ, ուղիղ փակագծերի մեջ: Վերևից ձգվող ձայն ունենալու մտադրությունը կարելի է կռահել նաև ժողովրդական մեղեդիի ձայնագրության էջին իր նշումից՝ «Alt-ին տալ մայր եղանակը»:

443/12-ի դաշնակման մեջ այդ վերին ձայնառությունը չկա, իսկ մայր մեղեդին հանձնարարված է մեներգող տոպրանոյին: Թե՛ 442-ում և թե՛ 443-ում մեղեդիի երկրորդ կեսը գրված չէ, որ թերագրություն պետք է համարել:

18. **Ձա՛ր, վըՙնգը.** Հայտագրերում վերնագրված է այլ կերպ՝ **Ձա՛ր՝ վը՛նգը:** Մշակման հայտնաբերված բոլոր բնագրերը Պոլսի շրջանի են. 402/44—50, 443/2, 4բ, 11բ, 12, 18 և19, 442/41բ, 403/92—95: Կա նաև ՀԺԵ/VIII, էջ 5՝ Վ. Սարգսյանի հրատարակածը, որ բավական տարբեր է բնագրերից, թեև պարունակում է նրանց մի քանի հիմնական տարրերը: Խոսքերը կան ՁSI և II, էջ 16 և 21, նույնն են և անվանված են՝ **Պարերգ թռնոցի:** Բնագրերում գրությունը (կրկներգի և երգի տողերի հաջորդականության և կրկնությունների տեսակետից) կրճատ է: Ամբողջությունը վերականգնվում է ՁS խոսքերի և 402/50-ում եղող դիտողության հիման վրա՝ «կրկնել [երգի ամեն մի տողից հետո] փոխ առ փոխ՝ ա. Ձար-վընգը և բ. Պարենք գիշեր»:

«Ձար, վընգը»-ն հայ նոր երաժշտագիտության մեջ համարվում է ռազմական-հերոսական պարերգ (տե՛ս՝ Ք. Կուշնարյով, Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, էջ 66, Լենինգրադ, 1958, ռուսերեն): Հավանաբար պարերգից նույն տպավորությունն ուներ նաև Կոմիտասը և այդ է պատճառը, որ մեղեդիի շարադրման և կատարման կերպը հաճախ փոփոխել է խոսքի արտաբերումը հատու դարձնելու նպատակով վանկերը ը ձայնավորի օգնությամբ կիսելով և շեշտաչափելով՝ **Ձա-րը վընգը, թռ-ղը վը-նը-գա:** Խոսքերի հավելյալ կոտորակման այս ձևը թեև երգային կուլտուրայում պախարակելի է համարվում, բայց ժողովրդական երգերում, մասնավորապես հայկական պարերգերում, որոնց ռիթմահնտոնացիան սերտ կապված է պարի շարժումների և սրանց րնոսթի հետ, երբեմն կիրառվում է: Կոմիտասը մերթ դիմել է համեմատաբար սահուն, մերթ՝ առավել կոտորակված ձևերին, մերթ էլ երկուսը համադրել է երգի տարբեր հատվածներում:

Բնագրերից երևում է, որ հեղինակը մտահոգվել է կրկներգի և երգի կատարման կերպի մեջ հակադրություն ստեղծելու խնդրով: Այդ տեսակետից ամենացայտուն օրինակը 403/92—95-ն է, որտեղ հակադրությունը սրվում է ոչ միայն մեղեդիի կտրտված և սահուն կատարման, այլև ներդաշնակման միջոցների օգնությամբ: Կրկներգի և երգի լադային կոնտրաստը **(ռե մինոր և ռե մաժոր)**, բուն երգի («Այս գիշեր, լուսնակ գիշեր») ներդաշնակության մեջ նշմարվող բազմալադային և բազմատոնայնական տարրերը, իրենք՝ օրիգինալ համահնչյունները, որ գոյանում են հյուսվածքի ձայների լիակատար ինքնուրույնության պայմաններում,— այս բոլորը, հակադրվելով կրկներգի պարզ ժողովրդական-լադային հարմոնիային, գեղարվեստական զգալի էֆեկտ են ստեղծում: Ընդհանուր առմամբ, դա՝ ժողովրդական մեղեդիների լադային-հարմոնիկ մեկնաբանության անվերջ նորանոր հնարավորություններ բացահայտելու երևույթ է, որ բնորոշ է Կոմիտասի ստեղծագործությանը:

Այս 403/92—95-ը, որ հաստատապես ամենից ուշ է գրված, բերված է հատորի հիմնական մասում: Մյուսներից՝ 402/46—50 (Ա), 443/4բ (Բ), 443/12 (Գ), 443/19 (Դ) և 442/41բ (Ե), որ հաջորդաբար ցուցադրում են հեղինակի կատարած աշխատանքը և բոլորն էլ գեղարվեստորեն ամբողջացած, արժեքավոր մշակումներ են, բերված են տարբերակներում: Ներդաշնակումից բացի, բավական փոփոխություններ են կրել երկրորդ ձայների խոսքերը: Սկզբում սահմանափակվելով վար, վընգը, գընգա բացականչություններով, հեղինակը հետո օգտագործել է ժողովրդական երգերի մեջ հանդիպող հոպ-պա տըմ-բա և պամ, պամ բացականչությունները, մի շարք բնագրերում միաժամանակ օգտագործված են երեքը: Բնագրերում երբեմն երկու տենորների երգաձևը միացված են միմյանց: Ծրագրերում խմբերգը միշտ հայտարարված է քառաձայն: ՁS-ում և մի շարք այլ համերգների հայտագրերում «Ձար, վընգը»-ն որպես հանկերգ կըցված է «Հինգ էծ ունեմ»-ին: Այս կցումն, անշուշտ, կատարված է բացառապես երաժշտական հիմունքներով:

19. **Էս գիշեր լուսնակ գիշեր.** Բնագրերն են՝ 393/43բ և 44; 398/4բ, 472/16 և 443/24: Առաջին երեքը Էջմիածնի վաղ շրջանի դաշնակումներից են, վերջինը՝ Պոլսի շրջանի: Կա նաև՝ ՀԺԵ VI, էջ

10: Մշակել է նաև որպես մեներգ (ԵԺ I, 122 և 189):

393/43բ՝ սկզբնականն է, 44՝ նրա վերամշակումը: Մայր մեղեդիի կուգահեռ տերցիային ընկերակցությունը, որ ընդհանրապես բնութագրական է Կոմիտասի այս երգի խմբական մշակումներին, այստեղ I-ին կեսում է միայն: Իսկ 2-րդ կեսում նկատվում է ընկերակցության կրկնվող ձայներին աստիճանական ընթացք տալով՝ «անշարժությունից» հանելու ձգտում: Այդ տեսակետից հետաքրքրական է 393/44-ը, որ համեմատության համար բերվում է ստորև, կպետեղվի նաև պարզ մշակումների մեջ:



Բնագրում խոսքերը գրված չեն, այստեղ վերցված են 398/4բ-ից, որը 393/44-ի թանաքով մաքուր արտագրությունն է (1900 թ. մեպտեմբեր): Ինչպես տեսնում ենք, կրկներգի մեջ «Վայ, լե, լե» խոսքերը չկան, և դրա հետևանքով երգը քառակուսի կառուցվածք ունի: 398-ում արտագրելուց հետո այստեղ իսկ խմբերգը նորից վերամշակել է. փորձ է արել տերցիային ընկերակցությունը հանձնարարել բասերին, իսկ նրանց կրկնվող հնչյունը՝ ալտերին, և չի իրականացրել, բայց ընկերակցող ձայները պարզեցրել է: Երգի կառուցվածքն ընդարձակել է, որպեսզի ընդգրկի կրկներգի լրիվ խոս-

քերն այնպես, ինչպես դրանք հետագայում վերստեղծել են ՀՄխ I-ում (էջ 33, № 28): Այդ վիճակում խմբերգը թանաքով մաքուր արտագրված է 472/16-ում և որպես վաղ շրջանի վերջնական տարբերակ՝ բերված է ներկա հատորի հավելվածում:

393-ում նշում կա՝ տոնայնությունը բարձրացնել **ֆա**-ի. դա թելադրված է «Էս գիշեր»-ը «Գութանը հաց եմ տանում» **դո մաժոր** խմբերգին կցելու մտադրությամբ: 398-ում՝ բարձրացնել **մի-բեմոլի**. թելադրված է «Լուսնակն անուշ» **մի-բեմոլ մաժոր** խմբերգին կցելու մտադրությամբ: Ի վերջո՝ էջմիածնական շրջանի մշակումներում «Էս գիշեր»-ը՝ մնացել է **ռե մաժորում** և կցվել է **ռե մաժոր** «Գութան»-ին:

ԹԺ, էջ 18բ, № 46 տարբերակը, ըստ երևույթին, նախորդել է 472-ին. ներդաշնակությամբ նման է նրան, բայց կրկնվող բաժինները չունի, որի հետևանքով խոսքը, որ գրված է կես տան համար, այլ կառուցվածք է ընդունում.

Էս գիշեր լուսնակ գիշեր,
Վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե, լե՛,
լե, լե, լե՛,
Չունն եկեր գետին նախշեր,
Ո՞վ է տեսել սիրած յարը մոռանա.

Աչքդ դեմ արա՝ պապչեմ,
Վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե, լե՛,
լե, լե, լե՛,
Կեռ ունքեր, կարմիր թշեր:
Ով մոռանա՝ երկու աչքդ կուրանա:

Այսպիսով, երգի և կրկներգի հարաբերության տեսակետից, գոյացել է ոտանավորի կառուցվածքի երեք տարբերակ, երեքն էլ ժողովրդական հիմքով, յուրաքանչյուրը յուրովի գեղեցիկ: Դա հայ ժողովրդական երգերի բանաստեղծության մշակման բնագավառում Կոմիտասի ձեռնարկած գեղարվեստական լուրջ աշխատանքի երևույթներից մեկն է:

443/24-ը գրված է մեծ երգչախմբի համար, և ինչպես կարելի է ենթադրել նույն տետրակի այլ խմբերգերից՝ Ալեքսանդրիայի 1911, հունիսի 5-ի համերգի պատրաստման շրջանում կամ հաջորդող օրերին, համենայնդեպս՝ նույնանուն մեներգը գրելուց (1911, օգոստոս 8) առաջ: Գրությունը կրճատ ձևով է: Ալտերի տերցիային ընկերակցության համար միայն տեղ է թողնված, արական եռաթխմբի քառաձայն ֆոնը պայմանական ձևով է նշված, թե՛ մեկը և թե՛ մյուսը միանգամայն անվիճելիորեն հասկացվում են: Խոսքերից միայն «Լո, լո» բացականչությունն է, սակայն մեղեդիի շարադրությունը խիստ համաձայնում է ՀՄխ տարբերակին: Այն դեպքում, երբ էջմիածնական տարբերակները, կապված լինելով դիսկանտներով երգչախմբի ռեգիստրային հնարավորությունների հետ, ընդհանուր առմամբ ցածրադիր են, այստեղ, հաշվի առնելով սովորական քառաձայն (և այն՝ մարդաշատ) երգչախմբի հնարավորությունները, Կոմիտասը համարձակորեն ընտրել է հնչեղ տոնայնություն: Այս վերջնական տարբերակը լրիվ վերականգնած՝ կտեղված է հատորի հիմնական մասում:

ՀԺԵ VI-ում տպագրվածի հիմքը նույն այս վերջին տարբերակն է, բայց այնտեղ սկզբից մինչև վերջ տոնիկային հարմոնիա է, մինչդեռ Կոմիտասի բնագրում հարմոնիան փոփոխվում է. այնտեղ ուղեկցող ձայների հաջորդականությունը ուղղաձիգ կերպով ցածից վեր է՝ B_2, B_1, T_2, T_1 (նման՝ «Գնա, գնա» խմբերգին), մինչդեռ իր բնագրում նախապես այդ ձևով գրելուց հետո Կոմիտասը ձևը փոխել և ուղիղ բարձրացող գիծը «կոտրել» է, իսկ դա յուրատեսակ թարմություն է հաղորդում հարմոնիային: Այսպիսով, բնագիրն ավելի հարուստ է և բովանդակալի:

1912, I/14 ապրիլի և հաջորդ մի քանի համերգներում «Էս գիշեր, լուսնակ գիշեր»-ը կատարվել է «Ա՛խ մա՛րալ ջան»-ին կից:

20—28. **Հարսանեկան երգեր. Շար. Բ.** Տե՛ս Ա շարի ծանոթագրությունը, էջ 255: Այս երկրորդ շարը երգերի ընտրության և դասավորության տեսակետից իր վերջնական տեսքը միանգամից չէ, որ ստացել է: Սկզբնական սևագրության մեջ (403/40—48) այն ընդգրկում է՝ «Գացեք բերեք», «Օրհնյալ բարերար աստված», «Մեր թագվորին ի՞նչ պիտի», «Թագվոր, ի՞նչ բերեմ», «Եղնիկ», «Թագվորի մեր», հետո ավելացված են՝ «Էն դիպան» և «Մեր թագվորն էր խաչ», ընդ որում երգերի հաջորդականությունն ու տոնայնական կապը որոշակիորեն ձևավորված չեն: Ապա դրանցից ընտրել և տոնայնական տեսակետից դասավորել է վեց երգ՝ «Մեր թագվորին ինչ պիտի», «Գացեք բերեք», «Օրհնյալ բարերար աստված», «Մեր թագվորն էր խաչ», «Էն դիպան» և «Թագվորի մեր» (403/49—58), որոնք որպես ամբողջություն, «Հարսանեկան երգեր» անվան տակ, սկսած 1913 թվականի կեսերից մի քանի անգամ կատարել է Պոլսում (1912 թ. դեկտեմբերի 15-ին Մ. Բաբայանին ուղղված նամակում գրում է՝ «Այս տարի սովորեցնում եմ հարսանեկան երգերը գլխավորապես»): Ի դեպ ասած, այդ շարին, երբեմն որպես յոթերորդ երգ, կցել է «Առավոտուն բարի լուս»-ը (ԵԺ II), որի մեներգի մասը մշտապես կատարել է Հայկ Սեմերճյանը: Նույն ժամանակ ստեղծագործական աշխատանքում կրկին անդրադարձել է շարին, նոր երգերով այն հարստացնելու նպատակով: Երևում է, նրան մտահոգել է՝ որ շարից դուրս են մնացել հարսի վերաբերող երգերը, որոնց ինքն առանձին արժեք էր տալիս: Եվ «Էն դիպան» ու «Թագվորի մեր» երգերի միջում գրել է՝ «Հալա մերիկ» ու գծերով նշել է այդ երգի տեղը: «Հալա մերիկ»-ը գտնվեց 442 տետրակում, որը 403 ծոցատետրից հաստատապես ուշ է գրված և Կոմիտասի մինչև այժմ հայտնաբերված վերջին տետրակներից մեկն է: Բայց այստեղ էլ դրան անմիջականորեն կցված են՝ «Վարդ, ըզ քե չըմ սիրի» և նորից՝ «Եղնիկ»: Այս երեք երգը իրենց բովանդակությամբ և տոնայնություններով միմյանց և նախկին շարի իրենց հարևան երգերին իրոք հարմարվում են: Դրանցից առաջինը խմբագրված վիճակում արտագրված է ամենավերջին՝ 404 ծոցատետրում, որտեղ մյուս երկու երգի համար տեղ է թողնված: Ուրեմն այդ երեք երգը ևս մտցրել է շարի մեջ, թեև չի հասցրել լրիվ խմբագրել և կատարել:

Կատարված շարի բոլոր վեց երգերը գրված են խառն խմբի համար, դրանց մեծ մասը վերաբերում է թագավորին: Ավելացված երեք երգը, որ վերաբերում են հարսին և պատկանում՝ Կոմիտասի անվանումով՝ «Ծաղկոց» երգերի խմբին, գրված են իգական խմբի համար (երկուսը՝ մեներգերով): Դրանք

կգալի հարստացրել են շարի թեմային-կերպարային բովանդակությունը, դրա հետ մեկտեղ՝ նաև երաժշտական (մեղեդային, ռիթմային և տեմբրային) —հուզական ոլորտը: Այսպիսով, Հարսանեկան երգերի Բ շարն այժմ ներկայանում է 9 երգից բաղկացած լրիվ վիճակում:

Հարսանեկան Բ շարն իր նախկին՝ 6 երգից բաղկացած վիճակում 1937 թվականին Փարիզում տպագրվել է (ՀԺԵ՝ VII): Կոմիտասյան հանձնաժողովի նախաբանում ասվում է, որ տպագրության համար այն նույնությամբ ընդունված է Կոմիտասի սևագրությունների գրպանի տետրիկից, ավելացված են միայն երանգանիշերը, արտահայտության տարակները և չափացույց թվերը, և այդ օրինակություններին կցված են դաշնակված հարսանեկան երգերի տարբերակները, ինչպես դրանք Կոմիտասը երգել է տվել Պոլսում: Իրականում տպագրության մեջ որոշ երգեր ավելի կամ պակաս չափով տարբեր են կոմիտասյան բնագրերից, իսկ կցված տարբերակներ չկան:

Տպագրված և բնագիր «Շար»-ի որոշ երգերում նկատվող տարբերությունների պատճառները պարզելու համար մենք դիմեցինք Փարիզի հրատարակության խմբագիր Վ. Սարգսյանին. նա այլ բացատրական տվեց. «Հարսանեկան շարքին տպագրության առթիվ Փարիզի հանձնաժողովին մոտ գտնըվող Կոմիտասի ծոցատետրը աչքի առաջ ունեցած եմ շատ ուշ, երբ արդեն տարիներ առաջ հիշողությամբ վերականգնած էի այդ շարքը այնպես, ինչպես երգել տված էր մեզ, Պոլսո «Գուսան» խումբին, և ինքս էլ նույն ձևով երգել տված եմ իմ երգչախումբերուն: Տրամաբանորեն հետևցուցած կամ ենթադրած եմ, որ Վարպետին վերջին նախասիրած ձևերը պիտի եղած ըլլային Պոլսո մեջ երգել տվածները, և այդ է պատճառը այն տարբերություններուն, որ նկատած եք «Մաղթանք» և «Փեսին գովքը» երգերուն մեջ: Իմ այս տեսակետին, սակայն, վճռական հանգամանքի նշանակություն վերագրելու չէ: Դուք ...իհարկե իրավունք ունիք վանոնք վերականգնելու ըստ Վարպետին ձեռագրին, հոգ չէ, թե ավելի հին եղած ըլլան» (Վ. Սարգսյանի 27. 10. 65 նամակը Մարսելից):

Անշուշտ, միանգամայն հնարավոր է, որ իր մշակումը կատարելիս հեղինակը տեղն ու տեղը փոփոխեր: Բայց հնարավոր է նաև, որ որոշ բաներ ակամա փոփոխվեին հետագայում հիշողությամբ վերականգնելիս: Անկախ այդ բոլորից, պահպանելով ակադեմիական հրատարակության սկզբունքը, ինչպես այլ դեպքերում, այս երգաշարի տպագրությունը ևս կատարվում է Կոմիտասի բնագրից: Նույն հիմունքով Շարի մեջ են առնված հարսին վերաբերող երեք երգերը, որ բնագրում կան, և շարի մեջ նրանց տեղը հայտնի է, թեև 1913-ին դրանք չեն կատարվել: ՀԺԵ տպագրության և հեղինակային ձեռագրերի բոլոր տարբերությունները նշված են առանձին երգերի ծանոթագրություններում:

Ձեռագրերում, ինչպես և կատարման հայտագրերում երգերը վերնագրեր չունեն («Փեսին արդուպարդը», «Մաղթանք», «Աղոթք», «Փեսին գովքը», «Կատակ», «Շուրջպար» վերնագրերը Վ. Սարգսյանի նշանակածն են): Այստեղ որպես վերնագիր դրվում են, ինչպես միշտ, ամեն մի երգի սկզբնական խոսքերը: Բնագրերը չունեն նաև երանգանիշեր, կատարման բնույթի և տեմպի ցուցիչներ, որոնք նշանակելիս Վ. Սարգսյանի երանգանիշերն ու ցուցիչները ընդհանրապես նկատի են առնվել:

Բնագրերն են՝ 536, 403/40—58, 442/42բ—43բ և 404/16: 536-ում պայմանական նշանների միջոցով կրճատ գրված են առաջին երկու երգը, դաշնակման նախնական և անավարտ փորձեր են: 403/40—48-ում սևագրությունն է (ուրվագծային ներդաշնակումներ), փոփոխություններով և խաչած, իսկ 49—58-ում 6 երգերի մատիտով մաքրագրությունն է, նույնպես՝ երբեմն կրճատ ձևով գըրված: 442-ում ավելացված երեք երգն են, 404-ում՝ դրանցից առաջինի մաքրագրությունը: ՁՏ III-ում Կոմիտասը վետեղել է վեց երգից բաղկացած շարի և «Առավոտուն բարի լուս»-ի գեղեցիկ համառոտ ամփոփումը, որ բերվում է ստորև:

«..Հարսանեկան երգերը թերևս բեկորներն են հայ բնապաշտական շրջանեն մնացած՝ քրիստոնյա քողով պարուրված: Բոլոր երգերու մեջ գիրկընդխառն կերթա մարդկային ու բնության կյանքը: Կերգվի ամուսնության և բնության գարունը, որ լուսնեկի ցողով ու արևի շողով կծլի: Հարսին վեր կհանեն ու լուսնկա հետ նուրբ ամպերու շղարշովը կքողարկեն: Փեսային երկնուց արևի հետ հրեղեն ձիու վրա կարշավեցնեն: Երկնային առկայծ աստղերը, օդի թարմ հովիկները, բարձրիկ ու ապատ լեռները, կանաչագեղ ձորերը, վեհ ու ոսկի դաշտերը, երգիչ աղբյուրն ու ակը, ձայնագեղ հավերն ու ցամաքի թռչուն եղնիկը, թագուն մանուշակը, ճերմակ շուշանը, հպարտ հասմիկը, արքայանման բալասանը, ծառերն ու պտուղները... բոլորը, բոլորը կխոսին իր սրտին մեջ և բնավզդաբար կտեսնեն մտերիմ ապգակցություն մարդկային և բնության աշխարհի մեջ:

Փեսային թագավոր, հարսին թագուհի կասեն. և ըստ այսմ՝ թագվորամեր- թագվորաքույր... վի օրվան մեծություններն են՝ հարսնեկան հանդեսը փառավորող:

...Երգվելու են յոթն հարսնեկան երգ (ընդհանուր հարսնեկան երգերը մոտ հարյուր են):

Առաջինը հանելուկով հարց է.

Մեր թագվորին ինչ պիտի.

Պատասխանի մեջ կիմիջեն հականե անվանե այն բոլոր նվերները՝ գլխարկ, կոշիկ, գոտիկ..., վորս մատուցանելու են օրվան թագավորին՝ փեսային:

Եղանակին մեջ մեկ խումբ հարց կուտա. մինչդեռ մյուսը մտածե պատասխանը, վրա կբերե առաջինը՝ գլխարկ, գոտիկ, կոշիկ...: Այսպես խումբ-խումբ մեկ-վմեկ կհարցուփորձեն:

Երկրորդով նվիրատուները կկանչեն երգելով՝

Գացեք բերեք թագվորամեր,
Որ գա նստե դարպաս անե,
Ծնրիկ կարկե սուրբ սեղանին,
Հրամե բարին մեր թագվորին:

Երբ մայրն իր նվերը կբերե, ի ցույց կդնեն հանդիսականներուն, որք կասեն.

Աստված չնորհավոր ասե:

Նվիրատուներեն հետո կկանչեն վանական թռչուններ՝ կռունկ, բադ, կաքավ... որ մասնակից լինին հանդիսին:

Գացեք բերեք կռունկն ի սարեն,
(Բադն՝ ի ծովեն, կաքավն՝ ի ձարեն)

Որ գա նստե մսիկ անե.
Ծնկիկ դնե սուրբ սեղանին,
Աստծու բարին մեր թագվորին:

Երրորդն աղոթք է.

Օրհնյալ. բարերար Աստված,
Կամքն օրհնյալ մեր Արարողին,
Ձուգեցինք, նա թամամեցինք,
Ձիաչն ի վրեն բռպմեցուցինք:

Չորրորդը փեսայի, իր ՝ղեստի, ձիու... գովքն է:

Մեր թագվորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Ձիուկն էր հրեղեն,
թագվորն էր վրեն:

Հինգերորդը հանելուկով հարց ու պատասխան է՝ հարսնեվորներին որևէ բանի նմանություն բերելով.

Էն դիվան, պետ-պետ դիվան,
Տեսեք էն որն ի:—
Էն դիվան, պետ-պետ դիվան՝
Գեղի ռեսներն ի:...

Մեկ խումբ կհարցնե, մյուսն անմիջապես կպատասխանե: Երգը դաշնավորված է ջղթայի ոճով, որ հաճախ կգործածե հայ գեղջուկը՝ մանավանդ պարերգերի մեջ:

Վեցերորդը հարսանիքի այն նվիրական վայրկյանն է, երբ հարսը կբերեն փեսայի տունը և տան առաջ կերգեն.

Թագվորի մեր, դուս արի,
Տես, քե ինչեր ենք բերի:—
Թագվորի մեր, դուս արի,
Քե ջուր բերող ենք բերի:

Այսպես յուրաքանչյուր տան մեջ կհիշեն գեղջուկ հարսի պարտականությունները, մինչև իսկ՝ թագվորամոր հետ ծեծկվելու առիթը չեն մոռնար:

Յոթներորդը (խոսքը՝ «Առավոտուն բարի լուս»-ի մասին է, Ռ. Ա.) հարսնեվոր նորապսակներու հին հիշատակները կներկայե: Նորապսակները կվերհիշեն իրենց հարսնիքի օրը, փառավոր հանդեսները, գունագեղ զգեստները, պարերը, ուրախ ու զվարթ բացականչությունները, սրինգն ու թմբուկը, ժամն ու մոմը, ավետարանն ու այն նվիրական վայրկյանը, երբ ձեռը ձեռին և կյանքը կյանքին կապեցին»:

20, I. **Մեր թագվորին ի՞նչ պիտի.** 536 նախնական սևագրության էական տարբերությունը վերջնականից այն է, որ կրկնվում են (այն էլ երկուական) ոչ միայն հարցը, այլև պատասխանը (ստորև բերվում է հատված), որի հետևանքով նկարագրական տարրը կուժեղանար:



Տպագրվում է 403/49-ից: Խոսքերը <ՄԽ II, էջ 64, № 34, այստեղ ևս շարքի առաջին երգն է: 8 տնից Կոմիտասն օգտագործել է միայն 4-ը: <ՄԽ իր օրինակում մատիտով ինքնագիր նշումներում անդրադարձված է երգի ներդաշնակման սկզբունքը՝ ամեն մի հաջորդ տունը սկսել նախորդից մաքուր կվարտա վեր գտնվող տոնայնության մեջ: Դա այս խմբերգի լադա-տոնայնական հետաքրքրական առանձնահատկությունն է, որի շնորհիվ հաջողությամբ իրացվում է նաև տեմբրային բազմազանությունը, և երգը ժողովրդի տարբեր խմբերի աշխույժ հարց ու պատասխանի բնական ձևն է ընդունում: Բնագրում գրված են առաջին երեք հարց ու պատասխանը, բայց չորրորդի համար գրված է խոսքը և երգի ավարտական տոնայնությունը՝ **մի-բեմոլ մաժոր:** Երաժշտական տեսակետից այս խմբերգը Շարի նախամուտի դեր է կատարում:


21, II. **Գացեք բերեք.** 536-ում նախնական դաշնակումը (2 տարբերակ) վերջնականից սկզբունքային տարբերություն չունի: Տպագրվում է 403/50—53-ից, գրված է լրիվ: Խոսքերը՝ <ՄԽ II, էջ 65, № 35, 10 տնից օգտագործված է 3-ը: Այստեղ ևս ներդաշնակման տոնայնական կառուցվածքի մասին նշումներ կան (թեև բուն տոնայնություններն այլ են), ներդաշնակված է նախորդ երգի նույն սկզբունքով (այս դեպքում՝ ամեն մի հաջորդ տունը նախորդից մաքուր կվինտա վեր). որի շնորհիվ արտահայտչական նույն էֆեկտն է ստեղծվում:

<ԺԵ տպագրությունը բնագրից հետևյալ տարբերություններն ունի.

ա. Բանաստեղծական տողերի սկզբում I-ին բասի, տենորի և ալտի ձգվող հնչյունը կոտորակված է (քառորդ և ամբողջ) և «գա» վանկի փոխարեն գրված է «գացեք» երկվանկը, «մեր» վանկի փոխարեն՝ «բերեք» երկվանկը և այսպես շարունակ (բնագրում նախապես հենց այդպես է եղել, հետո հեղինակը սև թանաքով փոխել, դարձրել է մեկ հնչյուն):

բ. «Հրամմե բարին» ֆրազներում սկզբնական հնչյունը մաքուր կվարտա ցած է:

գ. Տենորի երգամասում I-ին տան 2-րդ, 5-րդ և 8-րդ տակտերում նախշլագներ է դրված, գոյանում է հարաշար:



Կոմիտասի գրանցումներում ժողովրդական այս երգի սկիզբը մշակվածի փոքր-ինչ պարզունակ տեսքն ունի, վերջավորության՝ խոսքի արտասանությանը նմանվող երկու «հարմոնիկ» (կամ՝ «քրոմատիկ») տարբերակներից ոչ մեկը Կոմիտասը չի օգտագործել, գերադասելով պարզ դիատոնիկ վերջավորությունը: Այդ միաձայն երգը, սակայն, (բերված է վերը), հետաքրքրական է իր ժողովրդական կատարման առանձնահատկությամբ՝ սկիզբը միայնակ, հետո՝ տղաները, հետո՝ հարսանքավորների ողջ խումբը: Հենց այս առանձնահատկությունն է թելադրել Կոմիտասին այս և նախորդ երգերի կառուցվածքի և տոնայնական կապմի ընտրությունը:

22, III. **Օրհնեալ բարերար աստված.** Բնագիրը՝ 403/53—54: Խոսքերը <ՄԽ II, էջ 67, № 36, մեկ տուն: Բասերի 3-րդ տակտի **ֆա-դիեզը** <ԺԵ VII-ում **ֆա** է, հնարավոր է երկու ձևն էլ:


23, IV. **Մեր թագվորն էր խաչ.** 403 54—55: Խոսքերը՝ <ՄԽ II, էջ 68, № 37: 10 տուն է, ի դեպ, բոլոր տներում 2-րդ տողը «Խաչվառ խաչ ու մաչ» է, բացի վերջինից՝ «Հայոց խաչ ու մաչ»: Գործնականում երգվել է երկու տուն միայն, I-ինը և վերջինը:

Ուշադրության արժանի է բնագրի 5-րդ տակտում մայր մեղեդիի **սի-բեկարը:** Դա պարզապես մի

պատահականություն չէ (բեկարը շատ պարզ նշանակված է բնագրում և դրա սևագրության մեջ՝ 403/46), այլ բխում է ժողովրդական լադի հնչյունաշարի անհավասարաչափ տեմպերացիայի կոմիտասյան ընկալումից: Ժողովրդական կատարման մեջ այսպիսի հնչյունները (տվյալ օրինակում Գ ձայն լադի 2-րդ աստիճանը) հաճախ հավասարաչափ տեմպերացված երկու հարևան հնչյունների միջին տեղն են բռնում (այս դեպքում՝ **բարձր սի-բեմոլ** կամ **ցածր սի**) և մի առանձնահատուկ, ազգային-ժողովրդական երանգ հաղորդում մեղեդիին: Նույն երևույթը կարելի է նկատել Գ ձայն լադում ընթացող ուրիշ շատ երգերում ևս (այսպես, օրինակ, «Հոլ արա, եղո»-ի «Դե, սիրուն, ել, ել» հատվածի 11—12-րդ տակտերի **սի-բեմոլը** ժողովրդական կատարման դեպքում հնչում է՝ երբեմն **սի-բեմոլ**, երբեմն **սի-բեկար**, մեծ մասամբ, սակայն, դրանց միջինը), ինչպես նաև այլ լադերում: Ըստ երևույթին, «Գուսան» երգչախմբում այդ հնչյունն այնուամենայնիվ **սի-բեմոլ** է կատարվել, այլապես ՀԺԵ խմբագիրը բեմոլ չէր նշանակի: Նկատի առնելով, որ նման **սի-բեկարը**, մանավանդ խմբով երգելիս, առանձնահատուկ դժվարություն է հարուցում, ներկա հրատարակության մեջ Կոմիտասի բնագիրն անփոփոխ պահելով հանդերձ, այդ նոտայի վերևից ուղիղ փակագծերում նշանակեցինք նաև **սի-բեմոլը**: Բնագրում երգի 2-րդ կեսի կրկնությունը նշված չէ, որ պարզապես թերագրություն է:

ՀԺԵ VII-ում, բացի վերը հիշված **սի-բեկարից**, կան այլ շեղումներ բնագրից. 3-րդ տակտի **ռե**-ն և ֆորշլագը (սոպրանո և ալտ) բնագրում չկան, 2-րդ տակտում (սոպրանո և ալտ) և 5-րդ տակտում (բաս) մեղեդին ռիթմական այլ ձևակերպում ունի: Համեմատության համար ՀԺԵ VII-ից խմբերգն ամբողջությամբ բերվում է ստորև:

ՓԵՍԻՆ ԳՈՎՔԸ



Սովետական Հայաստանի կատարողական պրակտիկայում այս խմբերգը հաճախ հնչում է չափապանց տխուր երանգով, երբեմն էլ՝ որպես մի ողբ: Վ. Սարգսյանի նշանակած «Ազնվական և հպարտ» տերմինները ճիշտ բնութագրում են խմբերգի կատարման կերպը:


24, V. **Էն դիպան.** Տե՛ս Ա շարի նույնանուն երգի ծանոթագրությունը: Խմբերգը մատիտով արտագրելուց հետո (403/55—57) բնագրում հեղինակը հարցերը կրկնելու նշում է արել: Այդ նշումն այստեղ հաշվի է առնված: Խոսքերը (բարբառային ձևերը պահպանված են) կրճատ են գրված, ստացվում է հետևյալ հաջորդականությունը.


Էն դիպա՞ն — գյուղի ռեսներն ի,
ճնճղկնե՞ր—էն տիրացուքն ի,
էն արև՞ — մեր թագավորն ի,
էն լուսի՞ն — մեր թագուհին ի:

Դա համապատասխան է ՁՏ III-ում վետեղվածին: Վերջին՝ 4-րդ տան խոսքերն ակնարկում են հարսի երգերին անցնելը: Որպեսզի անցումը տրամաբանորեն հակառակ տրամադրություն ունեցող «Հավել մերիկ» երգին շատ անսպասելի չլինի, օգնության է գալիս խմբերգի վերջին ակորդի վրա հեղինակի դրած ֆերմատան: Խմբերգը տպագրվում է տեխնիկական որոշ խմբագրումով՝ կարդալը հեշտացնելու նպատակով չափը և տևողությունները երկու անգամ փոքրացված:

ՀԺԵ VII-ում խմբերգը հետևյալ տարբերություններն ունի. հարցերի կրկնությունները չկան (խմբերգն իրոք կատարվել է առանց կրկնությունների, դա ևս հեղինակի՝ հետագայում արած փոփոխություն է), արված է մետրի նույն փոփոխությունը, որ ասվեց վերևում, բայց փոխված են նաև ֆրազներն ավարտող հնչյունների տևողությունները, որի շնորհիվ երգը կանոնավոր 5/8 չափ է ստացել (2—3, 3—2): Վերջին ակորդը ֆերմատա չունի (հնարավոր է՝ սա էլ հեղինակը հետո է ավելացրել), այլ ունի կրեշենդո՝ անընդմեջ կերպով շարի նախկին վերջին երգին անցնելու համար: Վերջապես, ՀԺԵ VII-ի խոսքերում տների դասավորությունն այլ է, երգն ավարտվում է «տիրացուների» հանելուկով. այդ դասավորությունը ոչ միայն նման չէ կատարված՝ ՁՏ III-ին, այլ ինքնըստինքյան էլ տրամաբանական չէ: Ստորև բերվում է ՀԺԵ տպագրվածը:

ԿԱՏԱԿ





con alterezza — հպարտ
mf
p
Էճ ա-րեվ. երկ-ցուց ա-րեվ՝ մեր թա-գա-վորճ է։
p
f elegante — ազնվականաճ
Էճ լու-սիճ ամ-պե-րի տակ.
տե- սեք էճ ո՞րճ է։
p
mf con tenerezza — գորովագին
Էճ լու-սիճ ամ - պե - րի տակ՝ մեր թա-գու-հիճ է։
f հեգնելով
p
ճըճ-ճըղ-ճեր ճըլ-վը-լա-լեճ. տե - սեք էճ ո՞րճ է։
f con spirito — սրամիտ
ճըճ-ճըղ-ճեր ճըլ-վը-լա-լեճ՝ մեր տի-րա-ցուքճ է։
p


25, VI. **Դուն հալալ մերիկ.** 442/42բ և դրա մաքրագրությունը՝ 404/16: Մեղեդին նույնն է, ինչ որ Հարսանեկան Ա շարի «Մերիկ ջան հալալ» երգինը, վերջավորությունը մի փոքր պարզեցված, դաշնակումը սկզբունքորեն տարբեր է, պոլիֆոնիկ:

26. VII. **Վարդ, վքե չըմ սիրի.** Հնագույն ավանդականությամբ և խոսքի ու մեղեդիի ճոխ բովանդակալիությամբ հայ ժողովրդական երաժշտության աչքի ընկնող գանձերից է: Ժողովրդական երգը Գևորգյան ճեմարանի ծառա մոկացի Մանուկից Կոմիտասի հանձնարարությամբ ձայնագրել է նրա աշակերտ, երաժշտագետ Հակոբ Հարությունյանը: Կոմիտասն արտագրել է 317/10 և 21-ում, որտեղ «թագուհի» բառի փոխարեն «չալապի» է (ըստ Կոմիտասի՝ «ատող»): Կա ինքնագիր ծանոթագրություն՝ «երգում են ուրձը գովելիս»: Մշակելիս ժողովրդական մեղեդին ևս թեթև խմբագրել է: Մշակման միակ բնագիրը (442/43) մանր պակասներ ունի՝ 4—5 տակտերում 2-րդ և 3-րդ ձայները գըրված չեն, 6—7 տակտերում 2-րդ ձայնը գրված չի: Այդ փոքր թերությունների պատճառով երգը չկորցնելու դիտավորությամբ խմբագիրը, ամբողջությունից ելնելով, այդ տակտերը լրացրել է, շարունակելով բնագրում եղող ձգված հնչյունները: Այս լրացումները վերցված են ուղիղ փակագծերի մեջ: Ինչպես հարսին վերաբերող երգերի մեծ մասը, այս երգը ևս տխուր երանգ ունի:

27, VIII. **Եղնիկ.** Հարսի գովքն անող երգերից է: 368/15-ում միայն խոսքն է և նշված է՝ «Օրհնե Հիսուս»-ի եղանակով»: 310/6-ում գտնում ենք այդ երգը հետևյալ մեղեդիով, որ նույնպես հարսանեկան («Ծառը» գովելու) երգ է: Մշակման մեջ երգի



երկու նախադասությունների վերջավորությունները փոփոխել է, գոյացել են հետևյալ տարբերակները:



Մշակման բնագրերն են՝ 403/43 և 442/43: 403-ում (Շարի սկզբնական տնագրությունը) այս երգին նախորդում է «Գացեք բերեք»-ը, հաջորդում է՝ «Թագվորի մեր, դո՛ւս արի» շուրջպարը, 442-ում դրանով ավարտվում է հարսին հատկացված երեք երգը: Երկուսն էլ սնագիր են, միմյանցից տարբեր, բայց համարժեք տարբերակներ: Առաջինը բերված է հատորի հիմնական մասում, երկրորդը՝ հայկական ձայնանիշերով լրացումները հաշվի առած՝ բերված է Տարբերակներում:

28, IX. **Թագվորի մեր, դո՛ւս արի:** Ամենից ավելի տարածված հարսանեկան պարերգերից է: Մշակման բնագիրը՝ 403/57: Խոսքերը վերցված են Կոմիտասի վանական ձայնագրություններից: ՀԺԵ VII-ում տպագրվածը աննշան տարբերություններ ունի բնագրից (տենորի 1-ին տակտի 2-րդ **սոլը** վրիպակ է, լա պետք է լիներ): Հարսանեկան Բ շարի մեջ այս խմբերգը ծառայում է իբրև վերջաբան:

29—32. **Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Ա.** Այս և հաջորդ շարերի մասին տե՛ս հատորի նախաբանը (էջ 7-8):

29, I. **Ամպել ա կամար-կամար.** 541—ամենապարզ դաշնակումն է, միայնակ տենոր (մայր մեղեդին) ամբողջ խմբի շարունակ ձգվող ձայների հետ: Գրված է որպես 2-րդ երգ «Էրվում եմ», «Ամպել ա», «Արևը կայնե կեսօր» շարքի մեջ: 544-ում նույնը արտագրված է մեծադիր թերթի (հավանաբար տպագրության ներկայացնելու նպատակով) և մատիտով բավմակի փոփոխված: Սրա շարունակությունը՝ 512: Կարևոր փոփոխությունն այն է, որ, խոսքերի իմաստին համապատասխանեցնելով, մայր մեղեդին հիմնական մասում սոպրանոյին հանձնելու նշում կա, իսկ կրկներգում այն մնացել է տենորին: Այստեղ էլ երգը նույն շրջապատման մեջ է, ինչ որ 541-ում: 403/98-ում նույն նշումը կա և կրկներգը հարստացված է կոնտրապունկտային

ձայնով: Այդ նշումը հաշվի առնելով, 403/98-ից խմբերգը պետերված է այս հատորում: Խոսքերը լրացված են 512-ից: PPP նշումը հեղինակինն է: Մշակված է նաև որպես մեներգ (ԵԺ I, էջ 105 և 186): Մշակված մեղեդին Հառիճում գրի առնված միաձայն երգի մեղեդիից (302, № 364) չի տարբերվում:

30. II. **Երևան բաղ եմ արել և Տուն արի.** Ժողովրդական կենցաղում ևս գոյակցում են: Բնագրերը՝ 441/32բ, 403 65, 68, 106 և 108, 407/3—8, 9, 10, 14, 19, մեծ մասամբ սևագիր են, բրեմն կիսատ տրվագրեր: Ավարտված և մատիտով հավելամասեր մաքուր գրված է 407 3-ը, որ վերցված է հատորի հիմնական մասում և տարբերվում է ՀԺԵ VI, էջ 7-ում տպագրվածից (այս տպագրվածի I-ին կետը գտնվում է մի շարք բնագրերում, իսկ 2-րդը բացառիկաբար նույն վիճակում մեկ չի հանդիպել): Մյուսներից, մասնավորապես 2-րդ երգի դաշնակման մի քանի փորձեր, որոնք քիչ թե շատ լական տարբերություններ ունեն հիմնականից, հատորի հավելվածում բերված են 407/10, 14 և 19 (նկատելի է երգը կանանց խմբին հատկացնելու հեղինակի ձգտումը) և I-ին երգի 403/65 երկձայն պարզագույն տարբերակը, որ կցված է Տարբերակներում բերված **ֆա-դիեզ մինոր** «Հոռոմ»-ին:

ԵԺ I (№ 86)-ում առաջին երգն է, խոսքերը՝

Երևան բաղ եմ առել.
Չինար. չինար աղբերս:

407 3-ում երկրորդ երգի խոսքերն են՝

Կուրտիկ ունեմ՝ դեղին ա,
Իմ յարը ձեր գեղին ա:

31. III. **Հոռոմ, հոռոմ.** 403/64, 65, 66, 67 407/4, —10, 11, 14, 15՝ ներդաշնակման սևագիր փորձեր են: Ավարտված է 407/4-ը, որ դրված է չորս երգերի շարի մեջ՝ «Երևան բաղ եմ արել», «Տուն արի», «Հոռոմ, հոռոմ», «Էս առուն ջուր է գալի», դա բերված է սույն հատորում, 403 65-ը՝ Տարբերակներում: 407/11, 15, 403 64, 66-ում խոսքերի հատուկենտ նշումներ կան, որ գաղափար են տալիս երգի մեջ դրանց դասավորության մասին:

Ալգագրական տարբերակը՝ 305 9, № 70, խոսքը մեկ տուն է գրված: Մշակման մեջ մեղեդին պարզեցրել է, հրաժարվել 2-րդ, տոնիկային վերջավորություն և «պատասխանի» բնույթ ունեցող նախադասությունից, դրա փոխարեն, I-ին նախադասությունից հետո հաջորդաբար կրկնելով նրա տարբերակը, լադա-մեղեդիական նույն անկայուն վերջավորությամբ: Խուսափելով որոշ չափով գռեհկացած այդ կատակերգի կենցաղում տարածված տարբերակը կրկնելուց, Կոմիտասն այս ձևով ձգտել է այնվազցնել երգը:

Խոսքերի մի տարբերակ գտնվեց Կոմիտասի աշակերտներից մեկի ձեռքով գրված 385/33-ում, բաղկացած 9 երկտողից, որոնցից 8-ը երգ-կրկներգ սկզբունքով ընտրելով, Կոմիտասը համարակալել է: Այստեղ բերված են այդ խոսքերը:


32. IV. **Արևը կայնե կեսօր.** Աղբյուրներն են՝ 469/6, 541 և 512: Ներդաշնակման սկզբունքը գրեթե նույնն է. առաջինը բնութագրական է մայր մեղեդիի օկտավային կրկնապատկումով, այդ հավելագյուտ կիրառվող ձևը տեսնում ենք նաև «Յար ջան, արի» խմբերգում: 512-ում 541-ի տարբերակը ճաքուր արտագրելուց հետո հեղինակը մի քանի անգամ փոփոխել է կանանց և տղամարդկանց հնթախմբերի հաջորդականության կարգը և որոշ չի երևում, թե որ ձևի վրա է կանգ առել: Այստեղ, հատորի հիմնական մասում բերվածը այդ ձևերից մեկն է, այն ձևը, որին ընդհանուր առմամբ նման է Վ. Սարգսյանի հիշողությամբ գրի առած և տպագրածը (ՀԺԵ VI, էջ 8): Ձևերից մեկն էլ այս է՝

Սոպր. միայնակ **ա** և **բ** տողը,
Սոպր. խումբ՝ նույնի կրկնությունը,
Տենոր միայնակ **ա** և **բ** տողը,
Տենոր խումբ՝ նույնի կրկնությունը:

469 և 541-ում մեկ տուն եղանակի հետ լրիվ գրված են բոլոր ձայների խոսքերը, 512-ում նոտաների տակ խոսք գրված չի, բայց կա 3 տուն խոսքերի ամբողջությունը, որտեղից բերվում է այստեղ:

1910 թ. Բաթումի հավերգում այս երգը կատարել է «Գարուն ա»-ին կից, Պոլսի հավերգնեում կցվել է «Հոյ, Նազան» արական եռաձայն խմբերգին (ԵԺ II), անշուշտ, կատարվել է նաև առանձին:

33. **Մեր բաղումը նոնի ծառ (Հոդալլո).** Միևնույն «Հոդալլո» կրկնակն ունեցող երեք պարերգերի միացում է, դրանք կենցաղում ևս գոյակցում են, հանդես գալով որպես մեկը մյուսի շարունակություն կամ կարգացում: Հենց այս տեսանկյունից այդ երեք պարերգերը, ավելի ճիշտ՝ «Հոդալլո»-ի երեք տարբերակները Կոմիտասը օրինակ է բերել իր «Հայ գեղջուկ երաժշտություն» հոդվածում (Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 42, Երևան, 1941): Նույն հոդվածում Կոմիտասը նկարագրում է, թե ինչպես ժողովրդական պարերգերի կատարման ընթացքում գոյանում է բնական բազմաձայնություն (էջ 32), օրինակ է բերված «Լալն ասեք» պարերգի երկու ժողովրդական տարբերակների զուգորդումը, երբ մեկի վերջին տակտի հետ մյուսն է սկսում հնչել (հորիզոնական զուգորդում, Կոմիտասն անվանում է ժողովրդական բազմաձայնության պարզ ձև), կամ երկուսը միաժամանակ են հնչում (ուղղաձիգ զուգորդում՝ բարդ ձև): Կոմիտասի նշումներից երևում է, որ նույնը վերաբերում է նաև «Հոդալլո»-ին: 324 ձեռագրի մեջ գտնվեց սովորական տետրակի մի թերթ (էջ 48, հավանաբար «Հայ գեղջուկ երաժշտություն» հոդվածի սևագրություններից պոկված), երկու երեսին «Հոդալլո», «Հով արեք», «Լավն ասեք» երգերի համար հայկական ձայնանիշերով դուրս են գրված նրանց առանձին տարբերակների այդպիսի բնական կոնտրապունկտային վանական զուգորդումներ: Ժողովրդական բազմաձայնության այս երկու հետաքրքրքրական տեսակներն էլ Կոմիտասը փորձել է օգտագործել իր մշակումներում: Մասնավորապես, «Հոդալլո»-ի վերաբերյալ 442/46բ-ում գրված է՝ «Բաժանել խումբը երկուքի և [մեկ երգի] վերջաբանեն առնելով կցել [մյուս երգը]՝ ըստ ժողովրդական ոճի» (խոսքն այստեղ ժողովրդական բազմաձայնության **պարզ** ձևի մասին է): Իսկ 442/36բ և 41 էջերում կան «Հոդալլո»-ի 2-րդ և 3-րդ հատվածների ուղղաձիգ զուգորդման փորձեր:




Այս նմուշները արժեքավոր են նաև որպես «խիստ դիատոն» հարմոնիան (կվարտ-կվինտակորդների մասնակցությամբ) երգչախմբում կիրառելու հետաքրքրքրական փորձեր:

«Հոդապո» երգը Կոմիտասի վաղ ձայնագրածներից է, I-ին հատվածը կա ԱԺ I, էջ 32, № 104, 3-րդ հատվածը՝ ԱԺ II, էջ 28, № 5: Այս վերջինը 1891 թվականի ձայնագրություններից է, կարճ, առանց կրկնվող ֆրազների, սկզբում մեղեդիական փոքր տարբերությամբ, խոսքերը՝ ժողովրդական այլաբան երկտողեր, կրկնակը՝ «Հո տելլո ջան» (բերվում է ստորև):



Դրան հակառակ՝ մշակումն ուշ է արել: Բնագրերն են՝ 442/35բ, 36բ, 40—41, 45բ—47, 51: 35բ-նախնական փորձն է, բավմաթիվ ուղղումներով, որոնք իրագործված են 40 և 40բ էջերում, և սրանք վերջնական շարադրությունն են պարունակում: Երգի սկզբում կա՝ «տե՛ս էջ 92» [46բ], որտեղ գրված է I-ին հատվածի դաշնակումը որպես երգի նախաբան և վերջաբան: Հենց այդ ձևով էլ խմբերգը վետեղված է այս հատորում: Թե հիմնական մասում, թե նախաբանում հայկական ձայնանիշերով ուղղումներն ու հավելումները այստեղ նկատի են առնված: Կատարված են խմբագրական հետևյալ շտկումները. ա. Բնագրում երգի 2-րդ հատվածի «Ջան հոդապո» (սոպրանո) ֆրազը խավված է: Քանի որ խոսքերը չի խավել, ենթադրում ենք, որ առաջին անգամի համար՝ է միայն ֆրազը հանել և կրկնության մեջ այդ ֆրազը պահպանել ենք: բ. 3-րդ հատվածում հեղինակի ն:շած խոսքերը նույնությամբ պահպանելու նպատակով, այդ հատվածի 1-ին վերջավորության ալտի երգ:մասում ավելացված են առ-ռե հնչյունները, վեր:ցրած 36 էջում գտնվող տարբերակից:

442/45բ և 51 էջերում կան երգի առանձին հատվածների դաշնակման փորձեր, որոնք հետաքրքրքրական են ժողովրդական-լադային բնույթի հարմոնիայի և պոլիֆոնիայի տեսակետից և բերվում են ստորև:




34—36. **Վիճակի երգեր.** Երեք երգերի շար է՝ ա. «Երկնքի աստղերը», բ. «Հեյ, գյուլ եմ», գ. «Ծաղիկ ունեմ նարնջի», մշակված՝ 1-ինը իգական, 2-րդը՝ արական, 3-րդը՝ խառն խմբի համար: Նյութի ընդհանրությամբ և լադա-տոնայնության, տեմպի և տեմբրի հակադրությամբ ամբողջություն են կազմում: Կոմիտասի «Գուսան» երգչախմբի մասնակիցների տվյալներով այնտեղ սովորել են միայն 1-ինն ու 3-րդը: Երեք երգի մշակումն էլ գրված է Կոմիտասի վերջին շրջանի տետրակներից մեկում, որտեղ կան այլ չկատարված երգեր ևս:

34, 1. **Երկնքի աստղերը.** Ժողովրդական երգը կոչվում է՝ «Սկլա, սկլա»: Աղջիկների վիճակահանությանը նախորդող Համբարձման չորեքշաբթի օրը կատարվող ծեսի երգերից մեկն է: Արարողությունը նկարագրված է Պ. Պոռշյանի «Սոս և Վարդիթեր»-ում (Երկհոի ժողովածու, 1962, Երևան, էջ 142—145): «...Սկլա էր ասում, ու գլխաշորից բըռնած ընչանք մաշկները մի-մին տանիլ տալի: Վերջն էլ ասեց՝

Սկլա-սկլա պատին տուր,
Հավկիրը շատ տուր,
Վախում եմ քնեմ, քունս տանի,
Մաշկներս տանիլ տամ»:

«Սկլա» բառի իմաստը որոշակի հայտնի չէ, հավանաբար ժամանակի ընթացքում աղավաղված բառ է: «Հավկիր»-ը ենթադրաբար կապում են «հավկուր» (հավկուրություն) բառի հետ, երևի այդ հիման վրա է Ս. Մալխասյանի բացատրությունը՝ **«Սկլա-սկլա պատին տուր»** բանաձև, որ գործ են ածում հավկուրից բժշկվելու համար»: Կոմիտասի ձեռագրերում այս երգն իր ժողովրդական վիճակում կա «Վիճակի երգեր» փոքրիկ ժողովածուում (307/31, 1901 թ.): Մեղեդին և խոսքը փոքր-ինչ տարբեր են մշակվածից (բերվում են):




Նկատելի է մեղեդիի ինտոնացիոն նմանությունը վիճակահանության սովորական եղանակի պարզունակ տարբերակներին, բնագրում կա նաև իջեցված 5-րդ աստիճանով տարբերակ:

Կոմիտասը նոր խոսքեր է գրել, նկատի ունենալով ժողովրդական արարողության այն տեսարանը, երբ աղջիկները յոթն աղբյուրից առած ջրով ու ջրի մեջ լցված՝ վիճակահանության առարկաներով բղուղը գիշերվա բաց երկնքի տակ «աստղունք են դնում» և «խնդիրք անում», որպեսզի աստղերը «բարի ժպտան իրենց սերին» (Հ. Թումանյան, «Անուշ», «Համբարձման գիշեր»): Բայց այդ նոր խոսքերից միայն մեկ տունն է այս կամ այն չափով ավարտված: Տարբերակներից են՝ «Առավոտ որ գա, լուսը բացվի, քիքիրին հարցում տան», նաև՝ «Քիքիրիս հարցում տամ» և այլն (այս «Քիքիրին» ևս այդ երգի ժողովրդական խոսքերից է առնված): Կոմիտասի աշակերտների տեղեկության համաձայն սովորել են ոչ թե այդ, այլ սկզբնական ժողովրդական (թեկուզև անհասկանալի) խոսքերը: Քանի որ ձեռագրում նոր խոսքերը գրված են, մենք այդ մեկ տունը պահպանեցինք, ավելացնելով նաև բուն ժողովրդական խոսքերը 307-ից:

Երգի մշակման միակ բնագիրը՝ 442/39բ, վերնագրված է «Վիճակի երգ»:

35, II. **Հեյ, գյուլ եմ.** Ժողովրդական մեղեդիի ձայնագրությունը գտանք Մ. Եկմալյանի տետրում (Եկմալյանի ֆոնդ. № 21, էջ 2), արտագրված Կոմիտասից 1895 թվականին (տե՛ս այդ մասին Ռ. Ա. «Մակար Եկմալյանի մշակած նորահայտ գեղջուկ երգերը», «Սովետական արվեստ» № 12, էջ 40, 1968): Ստորև բերվում է հատված.



Բնութագրական է լադային երանգը՝ մեծացրած սեկունդայով: Մշակման մեջ Կոմիտասը մեղեդին շարադրել է խիստ դիատոն ոճով: Կարևոր են «Խումբ» և «Միայնակ» նշումները: Կոմիտասի մշակման բնագրում դրանք չկան (որովհետև խմբագրված գրություն չէ), թեև այնտեղ եղող խոսքերի հատվածներից իսկ պարզ երևում է, որ մշակումն էլ հատկացված է արական խմբի և միայնակի:

Բնագրերն են՝ 442/47բ—48: Կրկներգը (երգի սկիզբը) գրված է երկու հիմնական տարբերակով (սկզբնական ակորդը՝ ա. **լյա մինոր** եռահնչյուն, բ. **դո մաժոր** կվարտսեքստակորդ) և վերևից նշված է՝ «երկու ձևն էլ փոխեփոխ»: Դրա հիման վրա մենք հերթականորեն երկուսն էլ շարադրեցինք, միաժամանակ օգտագործելով նաև բուն երգի համար եղող երկու, միմյանցից փոքր-ինչ տարբեր շարադրությունը: Հայկական ձայնանիշերով ուղղումներն ու փոփոխումները նկատի են առնված: Բնագրում խոսքերից գրված են երգի և կրկներգի 1-ին տողերը միայն: «Ծաղիկ ունեմ ալա յա» տողով սկսվող քառյակը Կոմիտասն օգտագործել է «Սիրուն ջան» երգի խոսքերում, տպագրված ՀՄՆ I,

էջ 27, № 23, որտեղից էլ վերցրել ենք: («Սիրուն ջան» երգն իր ամբողջական խոսքով կկետեղվի Կոմիտասի պարզ մշակումների հատորում): «Հեյ գյուղ եմ» տողի շարունակությունը վանական ժողովածուներում և ԺԽ-ում, «բլբուլ եմ» տողն է, այդպես էլ պահպանեցինք: Կոմիտասի բնագրում «գյուղ եմ» խոսքի տակ կա տարբերակ՝ «վիճակ», որի համաձայն կրկներգի խոսքերը հավանաբար կլինեին այսպես՝

Հե՛յ վիճակ, նա՛յ,
Նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Ջա՛ն վիճակ, նա՛յ,
Նայ, նա՛յ, նայ, նա՛յ:

36, III. **Ծաղիկ ունեմ նարնջի.** Ժողովրդական այս հանրածանոթ երգը Կոմիտասի ձայնագրություններում գտնվում է առնվազն 12 տարբերակով, մի քանիսը բերվում են ստորև:


Ինչ-որ հրատարակության կից ռուսերեն լեզվով տպագրված է Կոմիտասի ձայնագրությունների մի թերթիկ, որ պարունակում է 4 նյութ. ա. Ավան (Երևանի տարբերակ), բ. Եկեղեցու վանգերի ղողանջ, գ. Ջան գյուղում (Երևանի տարբերակ), դ. Քրդական մեղեդի: Ժողովրդական-երաժշտական տեսակետից մեծ հետաքրքրականություն ներկայացնող այս մեղեդիներում «Ջան գյուղում»-ն իր հերթին հետաքրքրական և սովորականից տարբեր է, բերվում է խոսքը ռուսերենից հայերենի վերաթարգմանած վիճակում: Դա ցույց է տալիս, թե ժողովրդի մեջ տարածված, «շաբլոնացած» և սխեմատիկ դարձած մեղեդիում ինչպես Կոմիտասը հետաքրքրական ինտոնացիաներ էր գտնում: Սա հավանաբար էջմիածնական վաղ շրջանի նյութ է:



Վաղ շրջանի ձայնագրություններից է նաև 307/6 (1901, ս. Էջմիածին), որը ոչ թե ավանդական դարձած տարբերակի 6/8-ն ունի, այլ 4/4 է չափը:




Սրա կարգացած տեսակը, ավելի ևս հետաքրքրական, ճաշակավոր վարդարուն ելևէջով և ավելի խիստ դիատոն, գեղջկական երաժշտությանը ավելի ևս բնորոշ՝ գտնում ենք 400/4 և 6-ում:





Նույն տարբերակը եղանակային փոքր տարբերություններով, միայն I-ին կեսը, կա 325/126 ժողովածուում, 317 տետրում, ինչպես նաև ռիթմական մի փոքր այլ, հասարակ խմբագրությամբ՝ Կոմիտասի աշակերտներից մեկի ձեռքով գրված 326-ում:

Հետաքրքրական է նաև՝ իր «անկյունավոր» ելևէջով և խոսքերով Տ. Չիթունուց ձայնագրվածը (№ 313, 1909, II IX, Էջմիածին), որ կոչվում է «Լեղք գյուղի փոխնակ»:



Պուլիկը խաղացնելով աջ ու ձախ.

Խամբարձում յերկեն գիշեր,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Քիոր գնաց ծաղիկ չափել,
Ջան, վիճակ, ջան, ջան:

Խային աղբեր քիթը խաբեց,
Խանչալ վեր սըրտին չափեց:

Ես [Էս] իմ վիճակն ինչ կուլինք,
Խորերով ցորեն կուլինք:

Վիճակ [=հարս] նստի կար կանի,
Վարդն իրիսին խով կանի:

Սրանք բոլորը և մյուսներն էլ ըստ իրենց հետաքրքրական ու արժեքավոր են, առավել հետաքրքրականը, գեղեցիկ տարբերակներից մեկն էլ մշակվածն է:

400/4, 6-ում կա անավարտ մեներգային մշակում: Խմբերգի մշակման բնագրերն են՝ 393/42բ, 438 և 442/37բ—39: Առաջինը՝ S. T. B. (տվյալ դեպքում՝ S.=դիսկանտ) կավմի համար, ցածրադիր տոնայնության մեջ դաշնակման անավարտ ուրվագիր է, էջմիածնական վաղ շրջանի: Մեղեդին «Երեվանյան տարբերակի» պարզ և կարճ տեսակն է: 438-ը 442/37բ—38-ում եղած մշակման ավարտուն և պարզեցված խմբագրումն է, այս հրատարակության համար օգտագործված: Սակայն, երգի 2-րդ մասն այդտեղ չկա, վերցրել ենք 442-ից, որտեղ այն թեև խառն է գրված, բայց լրիվ հասկացվում է (հաշվի են առնված հայկական ձայնանիշերով ուղղումներն ու հավելումները): Վ. Սարգսյանի տվյալներով հենց այդ (ըստ մայր եղանակի) տարբերակն է կատարվել Պոլսում (1962 թ. մայիսի 2-ի նամակը):

37—43. **Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Բ.**

37, I. **Յարիս անուն Պալասան.** Մշակման միակ սևագիր բնագիրը՝ 442/57բ: Վերջին տակտի տենորը հայկական ձայնանիշերով տարբերակ ունի՝ **սի-դո-լյա-ի փոխարեն դո-սի-լյա:**

38, II. **Աղջի, անունդ Շուշան.** 1913-ի ձայնագրություններից, 304/4 (ԱԺ II, № 42, էջ 51 և 127): Մշակման բնագիրը՝ 442/57բ: Տղայի և աղջկա փոխերգ է: Խոսքերը լրացված են 304-ից, որտեղ երկտողերը խառն են գրված, այստեղ վերադասավորված են: Փորձել է **Շուշան** բառի տեղ դնել **ի՞նչ ա,** հավանաբար նախորդ երգին կապելու նպատակով: Սոպրանոյի 3-րդ և մյուս նման տակտերի մասին 442/58-ում գտնվեց հեղինակի հետևյալ ծանոթագրությունը. «Շունչ և կամար [պաուզա և լիգա, Ռ. Ա.] նշանակում է առաջին վանկի ձայնավորը շեշտել ուժեղ և ձայնել նույն վանկի վերջին բաղաձայնը»: Նման տակտեր կան այլ երգերում ևս:

39, III. **Կալերի ճամբին կեցա:** Ժողովրդական սկզբնաղբյուրը՝ 304/6 (ԱԺ II, № 44, էջ 52 և 128): Մշակման բնագրերը՝ 442/58, 63, 63բ և 64: 1913-ին Կողպ գյուղում (Երևանի նահանգ) ձայնագրած այս փոքրիկ պարերգի մեղեդին չորս հետաքրքրական տարբերակով դաշնակեցնիս Կոմիտասը պոլիֆոն բազմաձայնություն կիրառելու լայն ասպարեզ է գտել: Հատկապես աչքի է ընկնում **կանոնական նմանակման** կիրառումը մայր մեղեդիի և ընկերակցող բացականչությունների նկատմամբ: Կանչերի ու մայր մեղեդիի բազմերանգ կրկնությունները արտասովոր ջերմ գեղեցկություն են հաղորդում հանդարտ շուրջպարին: 58 էջի տարբերակը մյուսներից կանազանվում է իր սկզբի միևնոյ հարմոնիայով, որը լրացուցիչ երանգ (թեև հապիվ նշմարելի), փափկություն է հաղորդում դրան: Այս (Ա) և 63—63բ էջերի տարբերակները (Բ և Գ) բերված են

հատորի հավելվածում: Նույն՝ 63—63բ էջերում կան բանաստեղծական խոսքի մշակման մի շարք փորձեր, օրինակ՝

Կալերի ճամբեն դուլ ա,
Մատանիքս փիրուզ ա,
Ուրիշին ի՞նչ բան ունի,
Քուրն աղբոր փեսա կուլա:

Կալերի ճամբեն կես ա,
Աղբյուրի ակն էս ա,
Նոր լուսին, նոր ես նորել,
Նորել, նոր բակ բոլորել:

Սրանցով կարելի է լրացնել տարբերակների խոսքերը: Ի դեպ, 63բ-ում փորձել է նաև կրկներգի խոսքերը փոխել և օգտագործել է **նորել-բոլորել** արտահայտությունը, բայց չի ավարտել: 64 էջում խոսքեր գրված չեն: Այս հատորում կրկներգի խոսքերը թողնված են հինը, **լուրի** նշանակում է՝ օրոր, **նէնէ**՝ սիրուն, սիրունատես (քրդերեն):

64 էջում երգի վերջին և ամենից ավելի հարուստ մշակումն է, գրված առանց խոսքի: Բերված է հատորի հիմնական մասում, կատարման կերպի նշումը հեղինակինն է: Թեև պարտիտուրի 3-րդ տողի համար նշված է **alto**, բայց նախորդ էջում ցուցմունք կա երգը արական ձայնով սկսելու մասին, ուստի և այդ տողն այստեղ վերահանձնված է տենորին:

Վենց այդպիսի կատարման համար մշակված խոսքերը հայտնաբերվեցին 358 թվով պահվող ձեռագրում, առանձին թերթիկի վրա մատիտով գրված:

40, IV. **Բաղի պատը դդում ա.** 1913-ի ձայնագրություններից է, 304/8 և ԱԺ II, № 45, էջ 53 և 128 (այստեղ վրիպակ կա՝ բանաձևի՝ **սի-բեմոլը** պետք է լինի **լա-բեմոլ**): Խոսքերը կապված են ցարական բանակի զինվորագրության հետ: 442/58-ում ներդաշնակման սկզբնական սևագիր փորձ է, արական քառաձայն, փուգահեռական տերցիաներով, բասը պահված տոնիկային հնչյունով: Խափած և անկյունում գրված է՝ **նորը:** Հայկական ձայնանիշերով ուղղումները երգը նմանեցնում են 62 էջում գտնվող նոր շարադրությանը: Այստեղ մատիտով մաքրագրություն է (ձայնանուններ չկան, բայց կապմը նույնն է), կրկնված ավարտուն պարբերություն, որը, սակայն, շարունակված է 61բ էջում (նշանով ցույց է տրված) ևս մեկ պարբերությամբ (կրկնության նշանի բացակայությունը թերագրություն պետք է համարել): Խոսքերը թերի գրված են միայն 62 էջում, ապագրական տարբերակի «Իմ առածը էթում ա» տողը դարձրել է «Սիրած յարը էթում ա»: Այստեղ խոսքերը թեթև խմբագրությամբ լրացված են 304/6-ից: Երկրորդ պարբերությունը, որտեղ շարադրության կերպն ու ներդաշնակությունը փոխված, հարստացված են, հնարավոր է հանձնարարել ոչ թե խմբին, այլ արական եռյակի: Դրանից հետո երգն ամբողջացնելու նպատակով կարելի է առաջին պարբերությունը նորից կրկնել (խմբագրական այդպիսի առաջարկությունները հատորում նշված են ուղիղ փակագծերում):

41, V. **Պուճուր աղջիկ սևավոր.** 442/58բ-ում անկյունում գրված է՝ **նոր:** Նախապես գրել է ամբողջը 6/8, սկզբից 1/8 լռանիշով, ինչպես 1913-ին ձայնագրած ժողովրդական տարբերակում է (304/11, ԱԺ II, № 48, էջ 56 և 129): Մշակման բնագրում խոսքը կիսատ է, այստեղ լրացված է 304-ից: Ալտի և բասի խոսքերը այդպես էլ գրված են՝ միմյանցից և մյուս ձայներից ձայնավոր հնչյունների վգալի տարբերությամբ: Այդ ձայների 2-րդ տան խոսքերի համար ոչ մի դիտողություն կամ նշում չկա բնագրում, հավանաբար թողել է նույնը, ինչ-որ 1-ին տան մեջ է: Չափն ուղղելուց հետո հայկական ձայնանիշերով փորձել է գրել մի այլ, եռաձայն դաշնակում, որը բերված է Տարբերակներում:

42, VI. **Վարդ ա յարս.** 1913-ին ձայնագրած երգերից է, 304/12, ԱԺ II, № 50, էջ 57, մի քանի, շարունակ արագացող տարբերակներով: Մշակել է առաջին տարբերակը՝ 442/58բ և նույնը մաքրագրված՝ 404/36: Այստեղ վետեղված է 442/58բ սևագիրը (ուղղումները հաշվի առնված), որն ինչ-որ մանրամասներում գերադասելի է 404/36-ից: Խոսքերն, ընդհակառակը, 442-ում թերի են, այստեղ լրացված են 404-ից:

43. VII. **Հոյ իմ նապաստի յարը.** 1913-ի ձայնագրածներից է, 303-ում (սևագիր ծոցատետրը) միայն մեղեդիի 1-ին նախադասությունն է և տոնիկային վերջավորությամբ դրա կրկնությունը, 3-րդ նախադասությունը չկա: 304-ում (նախորդի թանաքով մաքրագրությունը) մեղեդին այնպես է, ինչպես մշակման մեջ: Եռամաս կառուցվածքն, անշուշտ, թարմություն է հաղորդում երգին: Կատարվելիս երգը պետք է կրկնվի սկզբից: Մշակման 442/59 բնագրում ալտի երգամասի համար հայկական ձայնանիշերով ուղղումներ կան, որ այստեղ հաշվի են առնված: Խոսքերից օգտագործված է միայն 1-ին տունը: 304-ում շարունակությունը հետևյալն է.

Ո՛չ բարդի ես — բար չունես,
Ո՛չ ջահել ես — յար չունես,
Երկնքի հավք ես դառել,
Իջնելու հնար չունես:

Նման քառյակ կա նաև «Այ տղա, մեր գեղեցի» երգում:

44—49. **Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Գ.**

44, I. **Ալագյալ աչերդ.** 1913 թվականին թանաքով մաքրագրած ծոցատետրում կա միաձայն երգի երկու շարադրություն՝ ելևէջային մանրամասների փոքր տարբերությամբ: Մշակելիս Կոմիտասը մերթ մեկ, մերթ մյուս տարբերակից ընտրել է լավագույն նկատածը: 442/59բ էջում մշակման նախափորձն է, իսկ 62բ էջում՝ վերջնականը, մատիտով սևագիր, բավմաթիվ փոփոխություններով և ուղղումներով: Ներկա հրատարակության համար այդ բնագրում գտնվող սովորական և հայկական ձայնանիշերով ուղղումները հաշվի են առնված, բացի այն տեղերից, որտեղ ցույց է տրված ներդաշնակման մի այլ հնարավոր տարբերակ: Վերջիններից էական են բասերի երգամասի սկիզբը և երգը եզրափակող տակտը (բերվում են ստորև):

Մշակման բնագրերում 1-ին տան խոսքերը լրիվ գրված են, 2-րդը՝ ավելացրել է խմբագիրը: Սկզբը-



նական **Ալագեազ** բառը 1913 թվականի ծոցատետրում **Ալագեօզ** է: Ժողովրդական մեղեդիի մեջ բոլոր երեք հատվածների համար կրկնության նշաններ են դրված (ԱԺ II-ում այդ նշանները թյուրիմացաբար դրված չեն, էջ 88, № 86): Մշակման մեջ կրկնությունների հնարավորությունը բացառված է:

328 թվով պահվող թղթերից մեկում կա միաձայն երգի երկու հետաքրքրական տարբերակ. 1-ում եղանակը տարբեր՝ կա «երգել աշխույժով» նշումը, 2-րդում խոսքերն են տարբեր՝

Ես քեզ սիրի, որ դու ինձի յար ըլնես,
Երված, վառված սրտիս դեղ ու ճար ըլնես.
Հուրն ընկնեմ, յարո ջան,
Ջուրն ընկնեմ, թաղան ջան,
Էն տղի գարդեն:

Այս խոսքերով սկսվող երգ կա նաև 304-ում (ԱԺ II, էջ 82, № 29), որը սակայն, այլ եղանակ ունի:

45, II. Սև ա չոբանի ջունը. 1913-ի ձայնագրություններից է, (ԱԺ II, № 88, էջ 90), միաձայն մեղեդիի երկու հատվածները փոքր տարբերություն ունեն, որոնք մշակման մեջ վերացել են: Խոսքերում, բացի «Սև ա չոբանի ջունը» երկտողից, գըրված է նաև «Փոցխս ծիրանի կոթ է» քառատողը, որ Կոմիտասն օգտագործել է «Սարեն կուգա» երգի համար: Մշակման բնագիրը 442/60, 60բ և 63բ: Գրությունը պայմանական է, ամբողջությունը վերականգնված է այդ երեք էջերում եղող մանրամասն նշումների հիման վրա: Հայ ժողովրդական պարերգերի այս «երկխոսական» ձևը Կոմիտասը նկարագրել է (օրինակներով) իր «Հայ գեղջուկ երաժշտություն» և «Հայ գեղջուկ պարը» հոդվածներում («Հոդվածներ և ուսումնասիրություններ», էջ 32, 57, 61, 62, Երևան, 1941):

Հնարավոր է նաև՝ այս ձևի հետ առնչություն ունի Կոմիտասի «Երկյակ խումբ» անվանումը: Խոսքերը լրացված են:

46, III. Մի յար ունեմ. Մշակման միակ օրինակը հայտնաբերվել է 442/62-ում: Տենորը և ալտը միմյանց լրացնելու (ուժեղացնելու) դեր ունեն: Երանգանիշերը հեղինակինն են, տեմպի ցուցիչ բնագրում չկա: Երգի ժողովրդական քառյակը հետևյալն է (ԺԽ, էջ 170).

Աղբեր ունիմ, ավյի ա,
Մեջքը բարակ՝ դամչի ա,
Չեռիցը մի բան չի գա,
Լեվիցը թալանչի ա:

Սակայն, հեղինակն, ըստ երևույթին, դիտավորյալ սահմանափակվել է երկու տողով միայն:

47, IV. Ելեք տեսեք դուսը. 1913-ի ձայնագրություններից է: Երգի հիմքում ընկած է կենցաղային եղելություն, նկարագրված Կոմիտասի բնագրում (1545, էջ 2, № 631 տե՛ս նաև՝ Ռ. Ա. Կոմիտասյան նյութերը Թորոս Ալատյանի արխիվում, ԳԱ Տեղեկագիր, № 11, էջ 67—73, 1964, Երևան):
«Երեք ընկեր սիրահարված են Սալաթին. վիճակ են ձգում՝ բաց վիճակ, հայտնելով յուրաքանչյուր նշանին համապատասխանող երիտասարդի անունը: Աղջիկը ընտրում է Ղուկասին: Ընկերները նախանձից խաղ են սարքում: Իբր թե իրենց ընկերին հայկերույթ են սարքել, տանում են մարագ և այնտեղ սպանում: Դեպքը պատահում է Շիրակի Մապարջուղ գյուղում 1913-ին»:

Մշակման բնագրերը 442/60—61բ (նախնական սևագրությունը) և 64բ—65բ (վերջնականը): Երևում է՝ սկզբից մտադիր է եղել 1-ին տունը հանձնարարել երգչախմբին (գրված է՝ «Ժողովուրդը»), 2-րդը մենակ տենորի (գրված է՝ «Վիրավոր տղան») և 3-րդը՝ դարձյալ ամբողջ խմբին: 2-րդ և 3-րդ տան խոսքերը հետևյալն են.

Օհաննես, աղբե՛ր ջան,
Աստվածդ սիրես,
Նորապսակ թագավոր եմ,
Գալբանդս բաշխես:

Սալաթի գոգնոցը
Ալաբաստիկ էր.
Դուկասի սպանել՝
Կրակ սաստիկ էր:

Այդ մեռայրությունից, սակայն, հրաժարվել է, օգտագործել (որոշ արտահայտություններ շտկելով) միայն I-ին տունը: Թեև այդ պատճառով տեքստի իմաստն ավարտված ., բայց մշակումն ամբողջացնելու բնական-կենցաղային ինքնատիպ պատկեր ներկայացնելով, որոշակի գեղարվեստական արժեք ունի: Կրկներգի երանգանիշերը և կատարման կերպի հայերեն նշումները հեղինակինն են:

48, V. **Այ տղա մեր գեղեցի.** 1891 թ. ձայնագրությունների մեջ (ԱԺ II, էջ 29, № 7) և ԱԺ I-ում (էջ 60, № 216) այս երգը լայային երանգով խիստ տարբեր է շարադրված՝ բնական և ալտերացված 4-րդ աստիճանով փոլոգիական հնչյունաշարեր, «հարմոնիկ» և բնական ձգտող հնչյուններով: Մշակված ամբողջական մեղեդին, մի փոքր պարզեցված, նման է երկրորդ բնագրին, նրա վերջավորությունը՝ առաջին բնագրին: Մշակումը (442/66 և 65բ) սևագիր է, սկզբնապես նախատեսել է իգական քառաձայն, գրել է, սակայն, երկձայն խմբի համար: 2-րդ ձայնի համար գրված է երկու տարբերակ, որոնցից մեկը նախնական անավարտ փորձ է: Այս պարզագույն խմբերգը ժողովրդական լաղի բնական հիմնաձայնը պահպանելով ներդաշնակման գեղեցիկ օրինակ է:

Բնագրում խոսքի մեկ տունն է մրայն, այն էլ՝ 4-րդ տողը 3-րդի կրկնությունը: Ներկա հրատարակության համար խոսքերը լրացված են 1891 թվականի տետրից, որտեղ Կոմիտասը հետագայում որոշ ուղղումներ է մտցրել, և ԺԽ-ից:

49, VI. **Շախկըր-շուխկըր.** Մշակման երկու բնագիր կա՝ 407/33, սևագիր է, փոփոխված և վերջնական տեսքով արտագրած 404/8-ում: Վ. Սարգսյանի հրատարակածը (ՀԺԵ VIII, էջ 9) հիշողությամբ գրված, հետո բնագրի բաղդատությամբ լրացված և վերակազմած է և բնագրից ունի մի շարք մանր, բայց էական տարբերություններ, խոսքը ևս բնագրի համեմատ կիսատ է: Տպագրվում է 404/8-ից, որ լիովին ավարտված, մատիտով մաքրագրված է: Երանգանիշերը ամբողջացնելիս հաշվի են առնված բնագրում եղող հեղինակի մի քանի թերի նշումները: Մշակված է նաև որպես մեներգ դաշնամուրով (ԵԺ I, էջ 130 և 189): 467/35-ում կա խոսքերի մի երկրորդ տուն ևս, կողքից գրված.

Արի՛, արի՛, յար արի՛,
Սարեն, ձորեն վա՛ր արի.
Սիրաս կուգա արյուն-ծով,—
Արի՛, մինուճար, արի՛:

Դա երգի ընդհանուր տրամադրությանը ողբերգական երանգ է տալիս, մինչդեռ խմբերգն ըստ երաժշտության ուրախ պարերգ է: 1914 թվականի մարտի 2-ի համերգի հայտագրում այդ 2-րդ տունը գըրված չէ:

50—56. **Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Դ.** Այս շարը լրիվ վիճակում կատարվել է 1914 թ. 22/II-ի հանդերգում:

50, I. **Սարեն կուգա ջուխտ՛մ դոչ.** 324/50-ում միաձայն երգի գրվածքն է, մեղեդին մշակվածից չի տարբերվում, խոսքերից՝ միայն վերջին տողը.

Խմանաս **ցավը** ոնց է.

407/45 և 48-ում սևագիրն է, I-ին տարբերակում երգն սկսվում է տոնիկային եռահնչյունով, 2-րդում ուրդեն կվարտսեքստակորդով է սկսվում, մյուս մանր տարբերությունները էական չեն: Ի դեպ, 404/10-ում, որտեղ վերջնական մշակումը մաքուր արտագրված է, որոշ փոփոխություններ (փորձեր) կան, որոնցից մեկն, այնուամենայնիվ, եռահնչյունով սկսելն է (I-ին տակտում 2-րդ ալտը **մի**-ի փոխարեն՝ **լյա**): Ենթադրվող տոնիկային եռահնչյունի փոխարեն նույնանուն կվարտսեքստակորդի առանձնահատուկ արտահայտչականությունը Կոմիտասը հաջողությամբ օգտագործել է այլ դեպքերում ևս: 404/10-ի մշակումը բերված է հատորում: Բնագրում Ա, Բ տառերով նշված են այս խմբերգին կցվելիք «Էրվում եմ»-ը (**լյա մաժոր**, քառաձայն արական): ՀԺԵ VIII-ում հիշողությամբ վերականգնած նույն խմբերգի ներդաշնակությունը կոմիտասյան առանձնահատկությունների տեսակետից բնորոշ չէ, այդ հարմոնիաները ոչ մի բնագրում չկան: Այստեղ միմյանց հաջորդում են՝ «Ախ, մարալ ջան», «Էրվում եմ» և «Սարեն կուգա»: Այսպիսի շարքում «Սարեն կուգա»-ն «Էրվում եմ»-ից հետո պատճառաբանված է:


51, II. **Էրվում եմ.** Մշակել է նաև որպես մեներգ (ԵԺ I, էջ 110, 186): Առանց նվագակցության խմբերգի չորս տարբերակները և նվագակցությամբ մեներգը փաստորեն նույն ներդաշնակումն ունեն: 407/49-ը (բերված է տարբերակներում՝ Ա) 404/12-ի նախնական օրինակն է, 3-րդ տեսորը, որ գործածված է այդ պայմանների համար սովորական՝ I-ին բասի փոխարեն, հավանաբար, նպատակ է ունեցել հնչման ուժը կարգավորել, գուցե և համապատասխան տեմբրային էֆեկտ առաջ բերել: 404/12-ը հիմնական մասում բերելով, բնագրում հայկական ձայնանիշերով հեղինակի ուղղումները (թեև ուրվագրային են) հաշվի են առնված: Հիշված երկու տարբերակներին ընդհանուր առմամբ միայն նման է ՀԺԵ VIII-ում տպագրվածը, որը դրանցից ունի թեև մանր, բայց էական տարբերություններ:

544/5 մատիտով սևագիրը կուրկ չէ շահեկանությունից (հետաքրքրական է, մանավանդ, սոպրանոյի և երկրորդ տենորի վուգադրությունը), բերված է Տարբերակներում (Բ): Նոկն թիվը կրող ձեռագրում, նույնպիսի մի երկրորդ թերթի վրա կա տպագրության ներկայացնելու նպատակով սևաթանաք մաքուր գրված տարբերակ, որ խմբի կազմով և դաշնակման կերպով բավական տարբեր է մյուսներից, այն ևս բերված է Տարբերակներում (Գ): Այս վերջինը մի այլ (№ 541) թերթի վրա գրված տարբերակի ուղղումներով վերամշակումն է, ընդ որում, այդ 541-ում խոսքերը լրիվ գրված են: 541-ում «Էրվում եմ»-ը նշված է՝ Ա, «Ամպել ա կամարկամար»-ը՝ Բ, և «Արևը կայնե կեսօր»-ը՝ Գ:

52, III. **Յար ջան, արի.** Էջմիածնական շրջանի վաղագույն մշակումներից է (միաձայն երգը՝ ԱԺ I, էջ 30, № 99), որին կրկին անդրադարձել է վերջին տարիներին, Պոլսում: 391/6-ում դաշնակման պարզագույն տարբերակ է, վերջին երկու տակտը կիսատ թողնված, որը բարելավված և ավարտված վիճակում արտագրել է 405/1բ-ում: Հայտնաբերված մյուս տարբերակները Պոլսում են լրված: Թեև դաշնակման եղանակը, խոշոր չափով նաև բուն ներդաշնակությունը բոլորի մեջ նույնն են մնացել, բայց տարբերակներից յուրաքանչյուրն իր նուրբ առանձնահատկություններն ունի և մի այլ տպավորություն կարող է ստեղծել: 442/10բ բարձր տոնայնության մեջ դրված 5-ձայն տարբերակում սոպրանոյի և ալտի օկտավային կուգահեռ ընթացքը յուրատեսակ խստություն պետք է հաղորդի երգին, թանձրացնելով նրա դրամատիկ բնույթը: 407/12 տարբերակում հյուսվածքը նոսրացված է, 3-րդ ձայնին (երգի I-ին կեսում) տարբեր շարժում է տրված՝ վշտալի, բայց նուրբ քնարական շեշտով: 404/21-ը ամենասկզբնականի (405) հարստացված և վերջնական տարբերակն է, դարձյալ թանձր հնչումով, բայց մռայլ: Սրան նման է Պոլսում, Կոմիտասի ղեկավարությամբ «Գուսան» երգչախմբի երգածից Վ. Սարգսյանի՝ հիշողությամբ գրի առածը (ՀԺԵ VIII, էջ I), ուրեմն այն իսկապես վերջնականն է: 404/21-ը վետեղված է հատորի հիմնական մասում: Մյուս տարբերակները՝ 405/1բ (Ա), 442/10բ (Բ) և 407/12 (Գ) բերված են հատորի հավելվածում: 2-րդ տան խոսքերը բերված են 407 բնագրից:

53, IV. **Էսօր ուրբաթ է.** Բնագրերն են՝ 391/15բ, 43 (2 տարբերակ), 393/50բ, նաև՝ ԹԺ (2 տարբերակ) —էջմիածնական շրջանի՝ 403/101, 407/52 (3 տարբերակ), 53, 442/8բ և 404/19—Պոլսի շրջանի: Կա նաև ՀԺԵ VI-ում: Երգի մշակումը գեղարվեստական արժանիքներից բացի, բնութագրական է ներդաշնակության բնագավառում Կոմիտասի ստեղծագործական որոնումները ցուցադրելու տեսակետից: Այս առումով տարբերակները երեք տեսակի են.

ա. Խորալային տիպի շարադրության սահմաններում ձայներին հնարավորին չափ մեղեդիական ինքնուրույնություն է տրված (մեծ մասամբ ժողովրդական լադա-ելևէջային բնորոշությունը պահպանելով): Միաժամանակ ձայները ենթարկված են գոյացող ակորդների միջև տրամաբանական կապ ստեղծելու նպատակին և ինքը՝ ակորդների հաջորդականությունը թարմացված է էնհարմոնիկ ձևով ստացվող՝ լադատոնայնական հեռավոր շեղում առաջ բերող համահնչյուններով: Օրինակներն են (բոլորն էլ վաղ շրջանի)՝ 391/15բ տարբերակը, իր 4-րդ տակտում գոյացող III մաժ. եռահնչյունով (հարմ. **լա-մաժոր** և **դո-դիեզ մաժոր**, բերված է Տարբերակներում, Ա), 391/15բ 2-րդ տարբերակը (բերված է ստորև) իր նույն եռահնչյունի օգնությամբ ստացվող՝ հարմ. **լա-մաժորից ֆա-դիեզ մինոր** շեղումով, որից վերադառնալիս **ֆա-դիեզ-մինորի** դոմինանտ-սեպտակորդը լուծվում է մինորի մինոր VI եռահնչյունի մեջ,



391/43 երկու տարբերակները (առաջինը բերված է Տարբերակներում՝ Բ, երկրորդը բերվում է ստորև),




և 393/50բ տարբերակը (բերվում է ստորև),




իրենց 2-րդ տակտում գոյացող III մաժ. սեպտակորդով, որը հարմոնիկ մաժորի տոնիկայի մեջ է լուծվում:


բ. Առաջնորդող սկզբունքը մեղեդիական նմանակումն է: Օրինակներն են՝ 403 101-ի երկձայն նմանակը (բերվում է ստորև).



407/52-ի I-ին տարբերակը (բերվում է ստորև), որտեղ երկձայն կանոնի մեջ մուտք են գործում «ապատ» ձայներ,




նույն բնագրի 2-րդ տարբերակը (բերվում է ստորև), որտեղ «ապատ» ձայնը սկսվից է հնչում, նույն



բնագրի 3-րդ տարբերակը (բերված Տարբերակներում՝ Գ), որ գրված է եռաձայն կանոնական նմանակումով (4-րդ ձայնն «ապատ» է):

գ. Ապատ ներդաշնակում, հեռու խորալային միապաղաղությունից, պարզ հարմոնիայով, նմանակման պոլիֆոնիայի թեթև կիրառված տարրերով, ձայների հնարավորին չափ ինքնուրույնացումով: Այսպիսի դաշնակման դեպքում երգչախմբի արտահայտչական հնարավորություններն ավելի լավ են օգտագործված: Օրինակներն են՝ 407/53-ը, որ բերված է Տարբերակներում (Դ), և 442/8բ սևագրությունն ու դրա 404/19 մաքրագրությունը: Այս բոլորը եվրոպական դասական պոլիֆոնիան և հարմոնիան (մասնավորապես նեո-ռոմանտիկների հարմոնիայի առանձնահատկությունները) հայ՝ ժողովրդական բնույթի դասական երաժշտության մեջ կիրառելու ըստ ամենայնի, հաջող փորձեր են և պատմա-գեղարվեստական նշանակալից հետաքրքրքրականություն ունեն:

404/19 բնագրի տարբերակը բերված է հատորի հիմնական մասում, Պոլսում հենց դա է կատարվել, քանի որ դրան բավական նման է Վ. Սարգսյանի՝ հիշողությամբ վերականգնածը, որ տպագրված է ՀԺԵ VI-ում (թեև ունի նաև էական տարբերություններ): Այդ բնագրում, նոտաներից ցած, հեղինակը գրել է՝ «Միայնակ՝ եռերգի հետ», որ նշանակում է փաստորեն նույն դաշնավորումը կատարել նաև որպես ձայնային կվարտետ, և՝ «Եռաձայն խմբի համար» ու պայմանական նշանով ցույց է տրված, որ այդպիսի դեպքում երգի 2-րդ նախադասությունից տենորի երգամասը պետք է դուրս մնա, այսինքն պետք է գոյանար հետևյալ, ավելի ևս «թեթև» տարբերակը:



Բնագրերում խոսքը սովորաբար գրված է մեկ տուն: Այստեղ լրացված է ՀՄխ I-ից (էջ 7, № 3), որտեղ, ի դեպ, առաջին տողը շարադրված է այսպես՝ «Էսօր ուրբաթ պաս է»:

54, V. Ջուր կուգա վերին սարեն. 477/3—հաճեմատաբար վաղ դաշնակում է, **սի-մինոր,** կրկնակը՝ «Նապլու յարո ջան»: Այդ տարբերակի միաձայն երգը գրանցված է 325/142-ում: Չնայած ալտերի երգամասում օկտավային անհարմար թռիչքներ ունի, ընդհանուր առմամբ հնչեղ է: Բնագրում հաջորդում է «Սարեն ելավ» և «Կուժն առա» **լա-մաժոր** խմբերգերին, կարող է նրանց կցվել: Բերված է տարբերակներում (Ա): 407/32-ում դաշնակման երկու անավարտ փորձեր են՝ մայր մեղեդին և օստինատ ֆիգուրով պահված 2-րդ ձայն: 407/39-ում ավարտված մշակում է, դարձյալ «Նապլու յար» կրկնակով, **լա-մինորում,** նույն տոնայնությամբ ավարտվող «Չինար ես»-ից հետո գրված: Ըստ երևույթին, մտադիր է եղել և դրան կցել: Քանի որ մշակման մեջ որոշակիորեն նշանակված են տեքստի վանկաբաժանման լիգաները, հնարավորություն է ստեղծվում խոսքի ամբողջությունը վերականգնել: Նույնպես կետեղված է տարբերակներում (Բ):

Կատարողական պրակտիկայում այս երգը ավելի արմատացած է որպես «Էսօր ուրբաթ է»-ի կույ-

գը, ինչպես գրված է 404/18-ում, երկուսն էլ ռե տոնայնության մեջ: Այս մշակման, ինչպես և մեներգի խոսքերից (ԵԺ I, էջ 125 և 189) նախկին «Նապոլու» կրկնակը հանված է (բանաստեղծության ավելացված տողերը ևս Կոմիտասն է գրել), երգի նախավերջին տակտում մայր մեղեդիի մեջ փոքրիկ և գունեղ փոփոխություն է արված: Ընդհանրապես. սա մշակման նախորդ տարբերակների գեղարվեստական պարզեցումն ու կատարելագործումն է, սևագրությունը գտնվում է 407/50-ում, նույն ծոցատետրում, որտեղ և նախորդն է: 404/18-ը վերջնական է: Ամբողջ հատորի հիմնական մասում: Սրան գրեթե լիովին նման է ՀԺԵ VI-ում տպագրվածը:

55, VI. **Ջաղացը մանի-մանի.** 442/19բ, 20բ, 21 էջերում մշակման երեք շարադրություն կա, վերջինը մատիտով մաքրագրություն, բայց խոսքերից հատուկենտ նշումներ միայն: Առաջին երկու շարադրության մեջ, ինչպես և ժողովրդական երգի ձայնագրությունում (ԱԺ II, էջ 71, № 66, 1913 թ.) մեղեդիի I-ին նախադասությունը երկու անգամ է, երրորդում դարձրել է երեք անգամ: 557-ում դաշնամուրային շարադրություն կա, որ խմբական մշակումից վաղ է արված: Գրեթե նույնատիպ է՝ մեղեդին ընթանում է երկու ձգված հնչյունի և շարունակական տրեմոլոյի ֆոնի վրա: Անկյունում երկու տուն խոսքեր են գրված, հարմարեցված մեղեդիի նախնական կառույցին ,այն է՝ տեքստի I-ին և 2-րդ տողերից հետո երգվում է «Յար, նայ, նայ...» կրկնակը: Խմբերգի վերջնական տարբերակում պարզ երևում է, որ այդ կրկնակներից հրաժարվել է: Այստեղ կետեղվում է վերջնական 442/21 տարբերակը 557-ի խոսքերով, առանց ավելորդ կրկնակների:

Նման մշակումներում Կոմիտասը հանձնարարում է սկզբից մեկ կամ երկու տակտ կատարել խմբերգի «ակոմպանեմենտային» մասը, հետո սկսել մայր մեղեդին (տե՛ս, օրինակ, «Հինգ էծ ունեմ» խմբերգի ծանոթագրությունը): Այդպիսի կատարումն այստեղ ևս միանգամայն հնարավոր է:

Ժողովրդական երգը հիմնված է իրական ողբերգական դեպքի վրա: Մշակումից, սակայն, դըժվար է անվերապահորեն ա՛յդ բնույթը կռահել: Տեմորների բարձրացումը խմբերգի վերջում, որ ստիպում է երգն ավարտել ուժգին հնչումով, ավելի շուտ ենթադրել է տալիս տրագի-կոմիկական բնույթ, հերոսը դառնում է ոչ թե դիպվածի զոհը՝ Սաթոն, այլ անհեռատես Սաթոն:

56, VII. **Առնեմ երթամ էն սարը.** Այն երգերից է, որոնք Կոմիտասի ուշադրության առարկան են եղել ամենավաղ շրջանից սկսած մինչև վերջին տարիները: 405/2-ը վաղագույն պարզ դաշնակումներից է, գրված ճեմարանցիների 3-ձայն արական (դիսկանտներով) խմբի համար, կտպագրվի մյուս պարզ դաշնակումների հետ միասին: 391/30-ն Հարսանեկան Ա շարը եզրափակող երգն է: Մյուս բնագրերը Պոլսի շրջանի են: 442/9բ-ում նախապես դաշնակել է կանանց 4-ձայն խմբի համար (ամեն մի ձայնը գրել է առանձին տողի վրա, վրաղեցնելով քառատող տետրի լրիվ էջը): Այս դաշնակումը, հայկական ձայնանիշերով փոփոխությունները հաշվի առնած, վերջնական է Տարբերակներում (Ա): 11բ էջում այդ ունեցածը լրացրել է տղամարդկանց քառաձայն խմբով և գոյացել է 8-ձայն մշակման առաջին տարբերակը: Նույնը, ավելի մշակված վիճակում, արտագրված է 14բ էջում, ավարտված և ամբողջական շարադրություն է, բերված է Տարբերակներում (Բ): Էական հատկանիշն այն է, որ բոլոր 8 ձայները նույն խոսքերը երգում են տարբեր հապաղումներով, որի հետևանքով, ձայնավորների արտասանության տեսակետից ստացվում է խառն հնչում: Գուցե դրանից խուսափելու նպատակով է, որ այս տարբերակը ևս փոփոխել է, ձայներից մի քանիին հանձնարարելով լո, լո, լո վանկերով երգել: 14բ էջում գրված է՝ «Արտագրված փոփոխությամբ»: Խոսքերից բացի, նաև երաժշտության մեջ մի քանի փոփոխություններ կրած, մաքուր արտագրվածը գտնվեց 404 ծոցատետրում (էջ 34), որը հատկացված է վերջին շրջանի խմբական մշակումների մաքրագրությանը: Այս մշակումը վերջնականն է, խոսքը (մեկ տուն) գրված է լրիվ, պակասում են միայն երգանիշերն ու տեմպը, կետեղված է հատորի հիմնական մասում: Պետք է ասել, որ ձայնավորների միատեսակ հնչում ստանալու հարցն այստեղ էլ լիովին չի վճռված, կան տակտեր, կամ՝ տակտամասեր, որտեղ խոսքի չորս տարբեր վանկեր հնչում են միաժամանակ: Կատարումը երանգավորելիս, անշուշտ, որոշ չափով պետք է հաշվի առնել նաև խոսքի մաքուր արտասանության պահանջները:

ՀԺԵ VI-ում տպագրվածը բնագրից չէ, այլ հիշողությամբ գրի է առել Վ. Սարգսյանը: Ընդհանուր առմամբ նման է 442/14բ-ին, տոնայնությունը կես տոն բարձր, «ակոմպանեմենտային» կարճ հընչյուններն այստեղ երկար են, փոքր տարբերություն կա մայր մեղեդիի և նշանակալից տարբերություն՝ ներդաշնակության մեջ:

Խոսքերը տպագրված են ՀՄԽ I, էջ 35, № 30: ՀԺԵ VI-ի երկու տուն խոսքից 2-րդն այստեղ չկա, իսկ 1914 թվականի մարտի 2-ին Պոլսի Ամերիկական դեսպանատանը կայացած համերգի ֆրանսերեն հայտագրից երևում է, որ խմբերգը կատարվել է ոչ թե ՀԺԵ, այլ ՀՄԽ-ում եղող խոսքերով: Այս հատորում հենց այդ խոսքերն են բերված (տե՛ս նաև Հարսանեկան Ա շարի նույն երգի ծանոթագրությունը, էջ ..): Գործնականում միանգամայն բավական է կատարել՝ **կրկներգ-I-ին տուն-կրկներգ**, քանի որ երգն ու կրկներգը նույն եղանակով են երգվում:

57—60. **Հայ գեղջուկ պարերգեր. Շար Ե.**

57, I. **Կանաչ արտը բան եկա.** 442/29բ, 30, 30բ, 34, 404/23: Երկրորդ ձայների բավմաթիվ տարբերակներով սևագիր դաշնակումներ են: 442/30բ-ում դաշնակման 2-րդ տարբերակը նշել է օգտագործելու համար, իսկ 34 էջինը, որ նախորդի վերափոխվածն է, արտագրել է 404/23-ում (թվում է, թե փոփոխության անհրաժեշտությունը բխել է երկրորդ ձայներին խոսքերը հարմարեցնելու դժվարությունից): Ներկա հատորում այդ երկու տարբերակն էլ կետեղված են, 404/23-ը որպես վերջնական՝ հիմնական մասում: 423/34-ում նշում կա, որ երգը գրված է Եգիպտոսում (նշանակում է 1911 թ. մարտ-հունիսի ընթացքում), բացի դրանից, տառերով նշված են շարքի մեջ մտնող երգերը և նրանց հաջորդականությունը՝ ա. Կանաչ արտը (էջ 34), բ. Նոր եմ նոր մածուն մերել (34), գ. Հոդայլո

(35բ), դ. Հարայ էլլի (35), ե. Լուսնակը բակ ա բռնել (37):


ՀԺԵ VIII հրատարակվածը երաժշտական տեսակետից լիովին նման է 404/23-ին: Խոսքերից 404-ում միայն I-ին տողն է գրված, ՀԺԵ-ում I-ին և 4-րդ տողը: Լրիվ խոսքը հատորում բերված է 442/34 ից:

58, II. **Նոր եմ նոր մածուն մերել.** 407/42—43, 44, 442/31, 31բ, 33բ—34, 404/23: Հենց սկզբից նշվել են երգի դաշնակի շարադրության երկու տեսակ. հիմնական մեղեդին ընթանում է մի դեպքում ներքուստ շարժվող ալիքավոր ակորդային ֆոնի վրա, մյուս դեպքում՝ ընկերակցող պահված ձայնի և պարզ կոնտրապունկտի ֆոնի վրա: Այդ երկու տեսակ շարադրության նախնական օրինակներն են՝ 407/43բ (բերված է Տարբերակներում, Ա, հայկական ձայնանիշերով ուղղումը հաշվի առնված, խոսքերը գրված են մյուս բնագրերի նմանությամբ) և 407/44, որ համեմատության համար բերվում է այստեղ, կվետեղվի նաև պարզ դաշնակումների հատորում:



407/42 դաշնակման ընկերակցությունը բացառապես գործիքային բնույթի է, նույնիսկ նշել է՝ «Այս ձևը դաշնակի [դաշնամուրի] վերածել»:

Հաջորդող երկու դաշնակումները սրանց վարգացումը և կատարելագործումն են: 442/31 էջինը 31բ-ի անավարտ սևագիրն է, 31բ-ի դաշնակումը հետաքրքրական է իր բնորոշ կոմիտասյան՝ աստիճանաբար գոյացող կվարտ-կվինտակորդների հարմոնիայով, կիրառված գրեթե նույն ձևով, ինչպես, օրինակ, «Քելե, քելե» մեներգի նվագակցության մեջ: Ժողովրդական երաժշտության լադա-ինտոնացիայի դիատոն բնույթն ընդգծող և թարմորեն գունեղ հարմոնիա է դա: Այս դաշնակումը, թեև իր երկրորդ կեսում փոքր-ինչ անավարտ է, դրված է Տարբերակներում՝ Բ (մանր նոտաներով գրված են խմբագրի կողմից բնագրի տրամաբանության հիման վրա կատարված լրացումները): Նույն բնագրում կան հայկական ձայնանիշերով փոփոխության նշումներ, որոնք դարձյալ թերի են և մոտավորապես հետևյալ պատկերն են ստեղծում.
(անշուշտ, առանձին հնչյունների երևան գալն ու



ձգվելը, նույն, սկզբնական ձևով պետք է լինի): Օրինակից երևում է՝ մտադիր է եղել կվարտակվինտային շարքն ավելի լայնորեն օգտագործել: Թե բերված տարբերակը և թե այս նմուշը ուսանելի են: Տարբեր ձևեր փորձելով, Կոմիտասն այս երգում նախապատվությունն այն համեմատաբար տվել է պարզ պոլիֆոնիկ ոճի դաշնակմանը: Հաջորդ երկուսն այդպիսին են:

442/33բ էջի դաշնակումը հետաքրքրական է նաև կառուցվածքով՝ 2-րդ ֆրազի կրկնությամբ (ստրոֆիկ ենթախումբ), ուստի նույնպես բերված է Տարբերակներում (Գ): Ալտի և տենորի կադանսային դարձվածքները բնագրում հենց այդպես տարբեր են: Այս տարբերակից բասի կարճ ձայնանիշերը հետագայում հանել է, հավանաբար, դրա հետ կապված՝ հրաժարվել նաև տենորների կրկնվող ֆրազից: Այսպիսով, գոյացել է 442/34 էջի եռաձայն տարբերակը, որը հետո, որպես վերջնական, մատիտով մաքուր արտագրել է 404/23-ում: Այս վերջին երկուսի էական տարբերությունը խոսքերի մեջ է, 34-ում գրված է ևս մեկ տուն, ինչպես ժողովրդական երգի ձայնագրության մեջ (ԱԺ II, էջ 54, № 47):

Յաման, հեռաց կիրակին,
Տագերակին, քավորակին,
Թողնք երթամ հասնեմ ես իմ սիրածին: Կամ՝

Երնակ հեռաց կիրակին,
Տագերակին, քավորակին,
Թողնեք երթամ հասնեմ ես իմ սիրածին:

Վերջնականի մեջ այս տունը չի մտցրել, որովհետև իմաստի առնչակետից նախորդ խոսքերի հետ չի կապվում: 404/23-ը բերված է հատորի հիմնական մասում:

59, III. **Հարայ էլի.** 407/47, 442/29բ, 32, 35, 404/24: Առաջինը նախնական ուրվագիր է, 442/29բ-ում գրված են միայն մեղեդին և բասը, 32-ում սևագիր դաշնակում է, որից ըստ երևույթին հրաժարվել է, թեև այն ունի գեղարվեստական ջահեկանություն (բերված է Տարբերակներում): Այստեղ նշված են փոփոխություններ, որոնցից գոյացել է 35 էջի տարբերակը, սա իր հերթին արտագրված է 404/24-ում, որը և վերջնական է, բերված է հատորի հիմնական մասում:

1913 թվականի ձայնագրություններից է (ԱԺ II, էջ 94, № 94): Գրված է միայն կրկներգը, խոսքերն այս են՝

Հարայ, էլի, էլի, էլի, էլի յար,
Ելի կայնի, բայդ տեսնեմ, թեկի յար:

(այս կրկնակն օգտագործված է տարբերակում): Նույն երգը, սակայն, կա ավելի հին ձայնագրությամբ ևս (324/52), դարձյալ միայն կրկնակը, նախորդի խոսքերով, ներքևից ավելացրած հետևյալ վավրաճալի տողերը՝

Հարայ, էլի, էլի, էլի, էլի յար,
Ցարաբ, կինի՞ յարս ըլնի վարժապետ:

60, IV. **Լուսնակը բակ ա բռնել.** 407/46, 442/15բ, 33, 37, 404/27: Առաջինը կիսատ թողնված հումֆոն ներդաշնակում է **(ռե մաժոր)**: Այստեղի և կից էրգերի նշումներից երևում է՝ մտադիր է եղել հետևյալ երգաշարը կապել. ա. Սարեն կուգա ջուխտ ղոչ, բ. Էրվում եմ, գ. Հարայ էլի, դ. Լուսնակը բակ ա բռնել: 442/15բ-ում կողքից գրված է երգի հետևյալ հարմոնիկ պլանը՝

Դո մաժոր-լյա մինոր-ռե մաժոր (I-ին նախադասություն)
Լյա մինոր-ռե մաժոր-սոլ մաժոր (2-րդ նախադասություն),

որը չի իրականացված: Փորձ է արել երկու ձայնը մեկ տակտ հեռավորությամբ օկտավային (կամ ունիսոն) ճշգրիտ կանոնով գրել և կիսատ է թողել: 33 էջինը բավմաթիվ ուղղումներով սևագրություն է, 37 էջինը և 404/27-ինը (վերջնական) նման են, տարբերությունն այն է, միայն, որ 37 էջում կրկներգի ալտի մասում 3/4-ով ձգված **լյա** և **սոլ** է: 404/37-ում երգը մտցված է հետևյալ շարքի մեջ՝ ա. Կանաչ արտը բան եկա, բ. Նոր եմ նոր մածուն մերել, գ. Մեր բաղումը կա նոնի (Հոդալլո), դ. Հարայ էլի և ե. Լուսնակը բակ ա բռնել: Այդ բոլոր երգերի սևագրություններում երևում է խոսքերի մշակման ընթացքը: Ա երգի էջին վերևից գրված է Եգիպտոս (տե՛ս այդ երգի ծանոթագրությունը):

61—64. **Հայ գեղջուկ պարերգեր. Շար՝ Զ.**

61, I. **Եկան Մոկաց հարսներ (Հարալո).** 443/18, 18բ, 442/49բ—50, 52բ, 53, 404/28, բոլորը Պոլսի շրջանի ձեռագրեր: 443/18-ում կա անսամբլային, 18բ-ում՝ դաշնամուրային շարադրություն, որ գրեթե նույն հարմոնիան ունի, ինչ-որ խմբականը: 442-ում խմբական մշակման փոփոխված սևագրեր են, վերջնականը մաքուր արտագրված է 404-ում, կետեղված է հատորում: Կոմիտասի նշանակած շեշտերից և դինամիկայի այլ, հատուկենտ նշումներից (որոնք, դժբախտաբար, ամբողջական պատկեր չեն ստեղծում) երևում է, որ մտադիր է եղել ձայնուժի սուր, կտրուկ անցումներ ունենալ: Այդպիսի մեկնաբանմամբ այս երգը կատակային, թերևս ծաղրական բնույթ է ստանում, համենայն դեպս ընդգծվում է նրա յուրատեսակ «գեղեցավարությունը», «կոշտ ու կոպտությունը»: Երգը ժողովրդի մեջ տարածված է երբեմն գովաբանական, երբեմն կատակային, վավեջտական կամ քննադատական խոսքերով: Կոմիտասի բնագրերում խոսքը հենց երկու տող է գրված: 385/34 ձեռագրում գտնվեցին խիստ ծաղրական բովանդակության մի քանի տուն խոսքեր, որ Կոմիտասի ձեռքով չեն գրված (թեև պարունակում են նրա մի քանի նշումներ), սկսվում են այսպես՝

Եկին, եկին Մոկաց հարսներ,
Խրախտանոր, խոնտանոր,
Եկին հասան մինչ Պոպնիս,
Խրախտանոր, խանտանոր և այլն

Հնարավոր է՝ խմբերգի մշակված խոսքերը երբևէ հայտնաբերվեն: Առայժմ սահմանափակվելով բնագրի երկտողով, խմբերգի կատարման բնույթը նշելիս խմբագիրը հիմնվել է ՀԺԵ հրատարակության վրա, որտեղ նշված է Joyeux, ցնծուն:

ՀԺԵ VIII-ում (էջ 6, № 6) տպագրված այս խմբերգը, որ հիշողությամբ է վերականգնված, I-ին ձայնում՝ մանր, մյուս ձայներում էական տարբերություններ ունի բնագրերից (որոշ տեղեր բնագրում նախապես այդպես է եղել, հետո Կոմիտասն ինքը փոխել է), I-ին նախադասության կրկնությունը, ինչպես և խմբի S. A. B. կալվմը բնագրերից ոչ մեկում չկան:

62, II. **Մեր բաղը ծառ ա.** 442/26բ-ում գտնվում է միաձայն մեղեդիի երկու տարբերակ, որոնք հետաքրքրական են ժողովրդական երգի մեղեդիական



գիծը «կարյարող» հնչյունների գործածության տեսակետից (Կոմիտասի մակագրությունը՝ «Երբ ծանր է. իսկ երբ արագ՝ ++-ները չեն երգվիր»): Նույն տեսակետից պակաս հետաքրքրական չէ նաև Ա՛ժ II (էջ 42, № 31, 1891 թ.) տարբերակը, որ «Ունջինար յար» խոսքերն ունի: 442 28 էջում մեղեդին պարզեցված է, խտացված, «կարդախաղերը» հանված, ամանակը փոփոխվող չափով վերակազմված: Այստեղ փորձել է այդ մեղեդին ուղղաձիգ կուգորդել հաջորդ՝ «Իմ չինար յարին» երգի մեղեդիի հետ և երկուսն էլ նույն (**մի**) հնչյունից սկսելով ստացել է երկտոնալ կառուցվածք (**սի** և **մի մինոր**), 45 էջում մեղեդին վերջնական տեսքն է ստացել, երգը դաշնակված է S. A. B. կազմի համար, հետաքրքրական է բազմամետրի տարրերով, հայկական ձայնանիշերով փոփոխությունները հաշվի առնված՝ բերված է Տարբերակներում (Ա):

50 և 50բ էջերում երեք շարադրություն կա, երկուսը՝ S. A. B. և մեկը՝ S. T. B.: Վերջինը բերված է Տարբերակներում, հայկական ձայնանիշերով փոփոխություններն իրականացված (Բ): 404/31-ում վերջնականն է, մաքրագրված, երեք տուն խոսքով, բայց դարձյալ երկու տարբերակով՝ S. A. T. և S. T. B.: Առաջինը բերված է հատորի հիմնական մասում, երկրորդը՝ տարբերակներում (Գ): Ըստ Կոմիտասի նշման (404/30բ, 31), այս երգի ամեն մի տնից հետո որպես կրկնակ պետք է երգվի հաջորդ՝ «Իմ չինար յարին» երգը (տե՛ս այդ երգի ծանոթագրությունը), այդ է պատճառը, որ տենորի բառերն այստեղ բերել է հաջորդ երգից:

ՀԺԵ VIII-ում տպագրված նույն խմբերգն այս կամ այն չափով է միայն նման հեղինակային բնագրին:

63, III. **Իմ չինար յարին.** 442/26բ—27, 41, 44, 44բ, 45 և 404/30: 442/26բ-ում միաձայն մեղեդին է միայն, էջ 41-ում՝ անավարտ դաշնակում խառն խմբի համար, ձայների հետևյալ դերերով. տենոր՝ մայր մեղեդին (տոնայնությունը **սոլ մինոր**), բաս՝ կարճ հնչյուններով տոնիկային ձայնառություն՝ «Չինար յարը», ալտ՝ դոմինանտային հնչյունով և շուտասելուվով նույն խոսքերը, տպրանո՝ ձգվող, հավանաբար օժանդակ կոնտրապունկտային մեղեդի (գրված է սկզբնական հնչյունը միայն): 44 էջում մշակման առաջին տարբերակն է, ավարտված և գեղարվեստորեն շահեկան, բերված է Տարբերակներում, 44բ էջում դրա պարզեցված վերամշակումն է, որը և մատիտով արտագրված է 404/30-ում և Պոլսում երգվածն է: Այս վերջինը բերված է հատորի հիմնական մասում: ՀԺԵ VIII-ում տպագրվածը դրանից մանր տարբերություններ միայն ունի:

Նկատի ունենալով նախորդ և այս երգի վուգակցությունը, 442/44բ-ում հեղինակը գրել է՝ «Բառերը [իմա՝ «Մեր բաղը ծառ ա»] մեկ հոգի, առանց ընկերակցության, միաձայն. խումբը՝ կրկնակը [իմա՝ «Իմ չինար յարին»], միասին»: Հետո 45 էջում գրել է՝ «Աղջիկներն ու տղաները կխոսին, աղջիկները **բառերը** եռաձայն, իսկ ամբողջը՝ կրկնակը՝ քառաձայն»: Եվ, նույն էջում հայկական ձայնանիշերով գրել է մի պարզ դաշնակում, որը «Մեր բաղը ծառ ա» խոսքերով հատկացրել է կանանց խմբին: Դա պետք է փոխարիներ նախորդ խմբերգին: Անկախ դրանից, 404/29-ում կա այս երգի եղանակի մի պարզ դաշնակում ևս (ավարտված մաքրագրություն) «Մեր բաղը ծառ ա» խոսքերով, հատկացված կանանց խմբին (բերվում է ստորև):





64, IV. **Հովն անուշ.** 469/3-ում կա դաշնամուրային մշակման կիսատ ուրվագիր, սկզբից նշված է կատարման կերպը՝ **երպուն:** 474-ում կան նույնպես դաշնամուրային և նվագակցությամբ եռերգային մշակման ուրվագրեր: Այստեղ ևս նշված է կատարման կերպը՝ **հեռուեն, հապիվ լսելի:** Երեվում է, որ մեծ ուշադրություն է հատկացրել այս երգին: Խմբական մշակման երեք բնագիր կա՝ 442/53, 54բ և 55բ, վերջինն ավարտված վիճակում արտագրված է 404/32-ում:

442/53-ում Կոմիտասն իր ձայնագրած ժողովրդական երգի ժանրային պատկանելությունը, կառուցվածքը և խոսքերը անփոփոխ է պահել, այսինքն՝ «Հովն անուշ»-ը մշակված է իբրև պարերգ, մեներգչուհու և խմբի երկխոսությամբ, բնույթը թեթև է, ուրախ, անհոգ, կատակային: Այդ մշակումը բերված է Տարբերակներում (Ա): Բնագրում խոսքի հիմնական քառյակից երկու տողն է միայն, մյուս երկու տողն այստեղ լրացրինք ԺԽ/310-ից: Կրկնության ձևը՝ «մենակ և նույնը խումբը» նշված է թե այս բնագրում և թե 325/210-ում, որտեղ ժողովրդական երգի ձայնագրությունն է գտնվում: «Նույնը», սակայն ոչ տառացիորեն, երկխոսական ձևը պարզ դրսևորելու նպատակով խմբի խոսքերն այստեղ բերված են 2-րդ դեմքով, այսպես.

Մենակ. Գնացի ջուրը ջրի,
Խումբ. Գնացիր ջուրը ջրի,
Մենակ. Ոտքս ընկավ օձի լեղի,
Խումբ. Ոտքդ ընկավ օձի լեղի,
Մենակ. Իմ հորն ու մորն ի՛նչ ասեմ,
Խումբ. Քո հորն ու մորն ի՛նչ ասենք,
Մենակ. Ինձ տվին օտար տղի,
Խումբ. Քեզ տվին օտար տղի:

Հնարավոր է նաև, որ մեներգչուհու խոսքերը խումբը կրկնի բառացիորեն նույնությամբ, խմբի երգածը կինչի որպես յուրատեսակ արձագանք (come eco): Ժողովրդական երգի ձայնագրությունն անփոփոխ պահելով, այս տարբերակում տոնայնական դիրքը ցածր է ստացվել, կատարելիս հնարավոր է բարձրացնել:

«Հովն անուշ» պարերգում տեսնելով գեղարվեստական բովանդակության ընդարձակման և խորացման մեծ հնարավորություններ, հաջորդ երկու մշակումներին Կոմիտասը բոլորովին այլ բնույթ է տվել: Սրանք երգեր են բնության մասին. իզուր չէ, որ Պոլսում կատարված տարբերակը հայտագրերից մեկում անվանված է **«Արարատյան գիշեր»:** Հանգամանորեն պրաղվել է խոսքերի մշակումով, երևում է բնագրերի համեմատությունից: Մշակված խոսքերը լրիվ վիճակում գտնվեցին Թորոս Ալատյանի արխիվում, մի փոքրիկ թերթիկի վրա մատիտով հապիվ նշմարելի գրված*: Առաջ է եկել երգչախմբային վարիացիաների հապվագյուտ հանդիպող ձևը: Տոնայնական միապաղաղությունից խուսափելու համար արդեն 442/54-ում նշել է հետևյալ պլանը՝ **սոլ-բեմոլ—ռե-բեմոլ—լյա-բեմոլ—ռե-բեմոլ—սոլ-բեմոլ** (բոլորը մաժոր): Տոնայնական կառուցվածքի այս սկզբունքին համապատասխան է այված նաև այդ խմբերգերի դինամիկան՝ մեղմից աստիճանաբար ուժեղացում (հյուսվածքի խտացման միջոցով) և աստիճանական վերադարձ դեպի սկզբնականը (բոլոր բնագրերում տների հաջորդականությունը նշված է հայկական այբուբենի տառերով): Երաժշտության բնույթին նայելով, այս երկու մշակումները պահանջում են հանդարտ, հովվերգական, **երպուն** կատարում, որ կարելի է համեմատել **հեռուեն** աստիճանաբար մոտեցող և հետո հեռացող խմբի երգեցողությանը, որ նախ՝ **հապիվ լսելի,** հետո՝ ավելի ու ավելի լսելի, տեսանելի և ջոջափելի, իսկ վերջում նորից մարող ձայնով՝ Արարատյան գիշերվա գովքն է երգում:

442/54բ-ում խմբերգի 5-րդ տունը հայկական ձայնանիշերով է գրված: Այդ տարբերակը վետեղված է հատորի հավելվածում: 404/32-ը վերջնականն է: Այստեղ էլ գրությունը լրիվ չէ, բայց դրված պայմանական նշանների օգնությամբ ամբողջությունը լրիվ վերականգնվում է: Ջետեղված է հատորի հիմնական մասում: Վերջին երկու տարբերակում կան Կոմիտասի համար ոչ սովորական հարմոնիկ սրություններ:

«Հովն անուշ» խմբերգի հիշողությամբ վերականգնած մի կարճ և փոքր-ինչ պարզունակ շարադրություն տպագրված է ՀԺԵ VIII-ում, էջ 8:

«Հովն անուշ» խմբերգը գգալիորեն հարստացնում է բնության մասին կոմիտասյան խմբերգերի շարքը, միաժամանակ՝ նրա ստեղծագործության մեջ, ձևի և հարմոնիայի բնագավառում էական նորություններ է բերում:

---

* Տե՛ս Կոմիտասյան նյութերը Թորոս Ալատյանի արխիվում, ԳԱ Տեղեկագիր, № 11, էջ 67—73, 1964, Երևան:

65. **Հով արեք.** Մեներգը՝ ԵԺ I, էջ 17 և 166: Երգչախմբի համար Կոմիտասի ամենաառաջին մշակումներից է: Սկզբնական տարբերակները՝ 398/1 (1900, 22 սեպտեմբեր), S. T. B., տեղ-տեղ էլ նաև A. կավմի համար, թանաքով մաքուր գրված, բարեփոխել և արտագրել է 472/15-ում: Այս տարբերակը, որ կտպագրվի դպրոցական երգերում, պարունակում է վերջնական դաշնակման մի շարք էական տարրերը: Առանձին գեղեցկությամբ աչքի է ընկնում երգն ավարտող ֆրազի ներդաշնակությունը:



Փոքր տարբերություններով խմբերգը կա նաև ԹԺ-ում (531, № 18):


Պոլսում նորից վերանայել է 398 նոտատետրի տարբերակը, փոփոխել ու լրացրել է, հետո նորը արտագրել է 407/5-ում (նույն ծոցատետրում է, օրինակ, «Չինար ես»-ի վերջին տարբերակը): Ընդ որում, արտագրելուց հետո դարձյալ որոշ բաներ փոխել է: Մտադրություն է ունեցել երգը տերցիա բարձրացնել (նշված է՝ «Բարձրացնել երյակ») և ալտի համար առանձին երգամաս գրել (երգի սկզբում փակագծի մեջ գրել է A.): Այդ կապակցությամբ բասերի 20, 21, 22 տակտերի մոտ օկտավա իջեցնելու նշան է դրել: Որ այս մտադրությունն իրականացրել է, կարելի է կռահել 1913, հունիս 15-ի համերգի հայտագրից, որտեղ «Հով արեք»-ը կատարվել է որպես **վեցձայն խմբերգ** (անջուշտ՝ S. A. T.$_1$ T.$_2$ B.$_1$ B.$_2$ կազմով): Այդ վեցձայն մշակումը, դժբախտաբար, դեռևս չի հայտնաբերվել:

Անկախ դրանից, 407/5-ի մշակումը S. A. T.$_1$ T.$_2$ B կազմի համար (բայց 4 ձայնից ավելի միաժամանակ չեն հնչում) գեղարվեստական ինքնուրույն և նշանակալից արժեք ունի, հեղինակի ընտրած տոնայնությունն էլ, տպրանոյի և բասի ցած դիրքով հանդերձ, ի վիճակի է խորությամբ արտահայտելու երգի տրամադրությունը: Այդ մշակումը վետեղված է հատորում: Բնագրի վերջում հեղինակի մի դիտողություն կա՝ «Գրել Ա մասը [իբրև] վերջաբան, շատ մեղմ...»: Դրա հիման վրա այս հրատարակության մեջ այդ հատվածը վերջում կրկնված է: Ի դեպ, դա արդարացնում է ՀՄԽ I-ում (էջ 5, № 1) տպագրված խոսքերի մեջ վերջում I-ին տան կրկնությունը:

Բնագրում տեղ-տեղ խոսքերը պակաս են, այստեղ լրացված են ՀՄԽ I-ից: Տեմպի ցուցիչները և երանգանիշերը դնելիս հաշվի են առնված նույնանուն մեներգի (ԵԺ I, էջ 17) նիշերը:

66. **Չինար ես, կեռանալ մի.** Նույնպես այն խմբերգերից է, որոնցով Կոմիտասն սկսել է վաղագույն շրջանից սկսած մինչև վերջին տարիները: Բնագրերն են՝ 391/37, 405/6, 11, նաև՝ 531/5 (ԹԺ), 406/1բ, 421/6բ (թանաքագիր սկզբնականը), 406ա, 421/6բ (մատիտով կրկնագիրը), 396/5, 423/8բ, 11, 394/6բ, 12բ, 443/2բ, 12բ, 441/33, 34, 34բ, 402/60, 61, 403/58, 59, 4-3/4 (ուշ գրվածք է), 407/1, 38, 40, 41, 54:

391/37-ը վաղագույնն է: Վերնագրի տեղում գրված է՝ «Ախաբախա», որ նշանակում է՝ «Կայնել ես ախա-բախա» (երգի նշանական ժողովրդական խոսքերը) և «Լե, լե», որ նշանակում է ժողովրդական լե-լե-ներից (առաջ անվանում էին ժողովրդական պարզուկ երգերը): Մեղեդիի վերջին ֆրազը պարզունակ է.




ներկայացնակված է առաջին կեսը միայն, խառն քառաձայն, և այդեն այս վաղագույն օրինակում կուսակահեական սեքսաաններով ու աստղումինանտային հարմոնիայով, որոնք հետագայում բավմիցս պետք է կրկնվեն այդ խմբերգի նեղությունների մեջ:

Երկրորդ կեսի համար ուրվագծված բասը իրականացված է 407/6-ում:

405/6 և 11-ը երգի մշակման էջմիածնական վաղագույն շրջանի առաջին ավարտուն փորձերն են (բերված են ստորև, կպետեղվեն նաև պարզ մշակումների հատորում):




Սրանցում նախանշվել է երգի 1-ին նախադասության սուբդոմինանտային հարմոնիայի երկու սեսակը՝ մինոր և մաժոր, երկրորդ տարբերակում մեղեդին որոշ տարբերություններ ունի հետագայում հաստատուն դարձած ձևից: Ինչպես 405-ի այլ խմբերգերը, սրանք էլ, հավանաբար, նախատեսված են դիսկանտներով արական խմբի համար: Խոսքեր չկան գրված: 405/6-ին գրեթե լիովին նման է Թժ տարբերակը: Հետաքրքրական է, որ այստեղ դեռևս «Կայնել ես ախա-բախա» խոսքերն են, այսինքն՝ տարբերակը գրված է վաղ, քան թե տպագրված ՀՄխ 1-ը, որտեղ երգը «Ջինար ես, կեռանալ մի» խոսքերն ունի (էջ 12, № 8):



406/1բ-ն վաղագույն շրջանի տարբերակներից համեմատաբար կատարյալն է, ձայները պոլիֆոնիայի տարրերով հարստացված, ներդաշնակումը համեմատաբար բավական դարձված: Զետեղված է Տարբերակներում (Ա): Խոսքերը թեև բնագրում չկան, բայց մանրամասնորեն դրված լիգաները միանգամայն համապատասխան են ՀՄԽ խոսքերին, այդ հիման վրա էլ ավելացրինք:

421/6բ (սկզբնական թանաքագիրը), 406ա, 421/6բ (մատիտով կրկնագիրը), 396/5, 423/8բ, 11 և 394/6բ տարբերակները մերտ կապ ունեն միմյանց հետ, մեկը մյուսի վերախմբագրումն ու կատարելագործումն են: Առաջին երեքում խմբերգն սկսվում է եռաձայն, վերջիններում՝ քառաձայն, առաջիններում I-ին նախադասությունը նույնն է, տարբերվում են 2-րդ նախադասությունները: 421/6բ սկզբնական գրվածքում դա պարզ է, «խորալային», ձգված հնչյուններով, 406ա-ում ձայները շարժուն են, բայց մեղեդիական և հարմոնիկ տեսակետից ոչ այնքան հետաքրքրական: Երգի 2-րդ կեսի այդ տարբերակները համեմատության համար բերվում են ստորև.


S.
Յա՛ր. Ցա. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ։
A.
Յա՛ր. Ցա՛յ։
I
T.
II
Յա՛ր. Ցայ. Ցա՛յ.
Յա՛ր. Ցա. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ.
I
B.
II
Նա՛յ. Ցա՛յ։
Յար. Ցայ. Ցայ. Ցա՛յ։
Յա՛ր. Ցա. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ։
Յա՛ր. Ցայ. Ցա՛յ։
Յա՛ր. Ցայ. Ցա՛յ։
Յա՛ր. Ցա. Ցա՛յ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ։
Յար. Ցայ. Ցայ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ։
Յար. Ցայ. Ցայ. Ցայ. Ցա՛յ. Ցա՛յ։


421/6բ-ն 406ա-ի օրինակով խմբագրելով, ավելի շահեկան է դարձրել: 421/6բ-ի այդ երկրորդ տարբերակը բերված է հատորի հավելվածում (Բ): Սրանք նույնպես էջմիածնում արված մշակումներ են:

396/5 քառաձայն սկսվող տարբերակում շարադրությունը պարզեցված է, ընկերակցող ձայները հարստացված են, բասի երգամասը 2-րդ կեսում (մյուս տարբերակների համեմատությամբ) բարձր է շարադրված, որ բարիտոնների կատարմամբ կարող է առանձնապես շահեկան լինել: Բերված է հատորի հավելվածում (Գ):

Հաջորդ երկուսը՝ 423/8բ և 394/6բ, նախորդի ավելի ևս պարզեցումն են: Մասնավորապես 423-ում, որը նախապես 396/5-ի նույնությամբ մաքրագրությունն է եղել, տենորների 2-րդ տակտը փոխել, բասերին է նմանեցրել: Բասերի 5-րդ տակտում շարժումը պակասեցրել է, 394-ում տենորների նախավերջին տակտում շարժումն ավելացրել է և այլն: Սրանք սկզբունքային նորություններ չունեն և չեն բերվում:

423/11-ում մատիտով գրվածը 423/8բ-ից տարբերվում է նրանով, որ կրկներգի սկզբում մեղեդիի հետ զուգահեռաբար՝ ընթացող տենորների գիծը (այստեղ՝ 2-րդ տենոր) նորից վերականգնել է: Այս տարբերակը սկզբնական շրջանի մի շարք մշակումների հանրագումարայինը, վերջնականը կարող է համարվել: Բերված է Տարբերակներում (Դ): Երկրորդ տենորների մասը, որ բավական ցածր է գրված, կարելի է հանձնարարել I-ին բասերի:

Նույն 394 բնագրում (էջ 12բ), համեմատաբար ուշ ժամանակ փորձ է արված «Հինար ես» մեներգի դաշնամուրային նվագակցությունը արական երգչախմբի հանձնարարել, որպես ընկերակցություն սոպրանոյի (կամ սոպրանոների) մեներգի: Դա զուրկ չէ գեղարվեստական հետաքրքրականությունից և բերված է Տարբերակներում (Ե): Երկու նման, անավարտ փորձեր էլ կան 443/2բ և 12բ բնագրերում (բերված են ստորև):



Սրանք, 394/12բ-ն և հաջորդները արդեն Պոլսի շրջանի բնագրեր են (տե՛ս նաև նույնանուն մեներգը և նրա ծանոթագրությունը՝ ԵԺ I, էջ 80 և 178):

441/33, 34 և 402/60, 61 տարբերակներից մի քանիսի մեջ երևում է խմբերգի շարադրությունը թանձրացնելու, մյուսների մեջ՝ նոսրացնելու ձգտում: Առաջին օրինակներից է 441/33-ը, որ անմիջական կապ ունի 396/5-ի հետ որպես իր նախորդի: Այդ ամբողջական մշակումն ևս բերված է Տարբերակներում (Զ), հայկական ձայնանիշերով հավելումները նկատի են առնված, բնագրի կարևոր տեղերում խոսքերը գրված են:

441/34-ը և 402/60, 61-ը 441/33-ի հաջորդական պարզեցումն են: 441/34-ը շահեկան է երգի առաջին կեսում գործադրված նմանակումով (տենոր), որ «Չինար ես»-ի մշակման տարբերակներում բացառիկ դեպքերից է: Այս տարբերակը նախատեսված է եղել քառաձայն խմբի համար, հետո բասի գծից հրաժարվել է և միայն մեկ տակտում տենորները երկուսի է բաժանել: Որպես ինքնատիպ տարբերակ բերված է հավելվածում (Է):

Նախորդ տարբերակում բասերը հանելով և երգի սկիզբը նոսրացնելով, 402/60, 61-ում նույն մոտեցումը ավելի առաջ է տարել, խմբերգի ձայնածավալը բավական փոքրացել է, հնչումը պարզեցվել: Այս տարբերակներում հետաքրքրական է նաև կրկներգի սկիզբը, որ այս ձևով այլ տեղերում չի հանդիպում: Խոսքերը թեև գրված չեն, բայց մանրամասն նշանակված են վանկաբաժանման լիգաները: 402/61-ը բերված է հատորի հավելվածում (Ը): 403/58, 59-ում կան ձայներին մեղեդիական ինքնուրույնություն հաղորդելու երեք հետաքրքրական, բայց անավարտ փորձեր:

473-ում կա ձեռագիր մի հին տետրից թերթիկ, որի ապատ մնացած երեսին հետագայում գրել է «Չինար ես» երգի կանանց քառաձայն խմբի համար դաշնակում: Սա ևս Պոլսի շրջանի գրվածք է, համապատասխան կանանց խմբի համար գրված «Ալագյալ»-ին, «Կուժն առա»-ին (ԵԺ II, էջ 85, 167), մասնավորապես վերջինի նման, այս դեպքում ևս խմբերգին պարզ, թափանցիկ հնչում է տրված: Այստեղ մյուս տարբերակների համար ոչ բնորոշ խրոմատիկ քայլեր և ընդգծված կերպով գունեղ ակորդներ կան, որոնք բարդացրել են հարմոնիան: Մինչդեռ, էջի ներքևում գրված՝ հեղինակի դիտողությունը (մեկ անընթեռնելի բառով) վերաբերում է կրկներգը **դո-մինորում** սկսելուն, վերջին հաշվով՝ հարմոնիայի պարզեցմանը, այնպես, ինչպես մեներգում է: Որպես ավարտված և գեղարվեստականորեն ամբողջացած ներդաշնակում, 473/4-ը վետեղված է
Տարբերակներում (Թ): Խոսքերը գրված են մանրամասն նշանակված լիգաների հիման վրա:

«Չինար ես» խմբերգի՝ երկարատև փորձերի ընթացքում գոյացած այս բազմաթիվ տարբերակներից երևում է, որ խմբերգի ներդաշնակությունն այնուամենայնիվ չի բավարարել հեղինակին (այդ տեսակետից «Չինար ես»-ի «ճակատագիրը» նման է «Ծիրանի ծառ» խմբերգի «ճակատագրին»): Հիրավի, խմբերգի 2-րդ կեսի սկզբի «բացահայտ» դոմինանտային հարմոնիան ինչ-որ չափով աղարտել է ներդաշնակման ոճի մաքրությունը, անսպասելի է հնչում: Դա չի խափանում, սակայն, այդ խմբերգի բերված տարբերակների խոր բովանդակալիությունը, անկեղծ քնարականությունը և ընդհանուր առմամբ՝ նաև ազգային-ժողովրդական ոճը, որն այստեղ ցայտուն մեղեդիի միջոցով հաջողությամբ պահպանված է արդեն: Դրանցից զգալի կանավանվում են 407-ի տարբերակները:

Այս ծոցատետրում (կեսը միայն գրված), որ պարունակությամբ էլ դատելով, Կոմիտասի՝ մեզ հասած վերջին ձեռագրերից է, «Չինար ես»-ի հինգ տարբերակ կա՝ էջ 1, 38, 40, 41 և 54: Առաջինը (407/1) կանանց քառաձայն խմբի համար սեղմ շարադրության գեղեցիկ նմուշ է, դժբախտաբար՝ միայն առաջին կեսը գրված, ներդաշնակման սկզբունքով նման է 441/34-ին: Բերվում է ստորև:



Հաջորդ երեքը չափազանց փոփոխություններով խճողված, դժվար ընթեռնելի, այնուամենայնիվ ցույց են տալիս էջ 54-ի մատիտով մաքրագրված տարբերակի գոյացման ընթացքը: Մեզ հասած բնագրերում սա «Չինար ես»-ի վերջին և համեմատաբար ամենակատարյալ տարբերակն է: Այստեղ մեղեդին «ապատագրվել» է ընկերակցող սեքստաներից և տերցիաներից, ձայները մեղեդիական ինքնուրույնություն ունեն, հյուսվածքը պոլիֆոնիկ է, հարմոնիան պարզ է և ավելի, քան որևէ այլ տարբերակում, մոտիկ է երգի ժողովրդական-լադային բնույթին (շատ բանով հիշեցնում է նույնանուն մեներգի հարմոնիան): 407/51-ը վետեղված է հատորի հիմնական մասում:

Մի շարք բնագրերում «Չինար ես»-ին անմիջականորեն հաջորդում է «Փափուրի» խմբերգը (406, 394, 396, 423 և այլն): Մեր ձեռքի տակ եղած հայտագրերից՝ միայն 1910 թվականի հունիսի 3-ի Բաթումի համերգում է, որ այդ երգերը կից են կատարվել: Պոլսի շրջանի համերգներում «Փափուրի»-ն սովորաբար հաջորդել է «Անձրևն եկավ»-ին: Չնայած դրան, բնագրերում «Չինար ես»—«Փափուրի» հաջորդականությունը որպես կույտ՝ բավական որոշակի է ցուցադրված: 407-ում «Չինար ես»-ի **դո-մաժոր** սկսվող տարբերակներից մեկին կցված է **լյա-մինոր** «Ջուր կուգա»-ն:

67. **Փափուրի.** Բնագրերն են՝ 405/8բ և 9, 406/1բ, 396/5, 423/8բ, 394/6բ, 402/57 և 437: Ժողովրդական երգը (միայն կրկներգը) կետեղված է Աժ I, էջ 8, № 26: Մեղեդիի այս, ինչպես նաև 405-ի շարադրման մեջ որոշակի հետաքրքրականություն ունի 3-րդ տակտի սինկոպը, որ բառի շեշտին ուղիղ արտասանություն է տալիս, միաժամանակ և աշխուժություն է մտցնում:

405-ը ամենահինն է դպրոցական կատարման այլ երգերի հետ երկու տարբերակով գրված: Առաջինում ներդաշնակումը պարզ է, պահված տոնիկային ձայնառությամբ, երկրորդում փորձել է այն բավական դարձնել: Ստորև բերվում է ա տարբերակը. ցած դիրքը կապված է դիսկանտների մաս-



նակցությամբ արական խմբի ձայնածավալին հարմարեցնելու հետ: Պետք է ենթադրել, որ «Փափուրի ջան» խոսքերը երգվել են բանաստեղծության ամեն տողից առաջ միայն: Այս պարզ տարբերակները կկետեղվեն դպրոցական երգերի հատորում:

406-ում, նույնպես էջմիածնական շրջանի բնագրերից, «Փափուրի»-ն գրված է **սի-բեմոլ մաժոր** «Չինար ես»-ին կից: Կրկներգը եռաձայն, երգը քառաձայն է: Խոսքը գրված չի (բացի 4—5 տակտերի բառերից), բայց կատարողական նշաններից և պաուզաներից կարելի է կռահել, որ 405-ի կառուցվածքն այստեղ փոխված է՝ առաջին երեք տակտը (կրկնված) հատկացված է միայն կրկներգին, հաջորդ երկու տակտը՝ բանաստեղծության 1-ին տողին: Խոսքերն ավելացված ՁՏ I-ից (էջ 11, № 2բ), կետեղված է Տարբերակներում (Ա):

Հաջորդ տարբերակներից 396/5-ը ամբողջը քառաձայն է, 423/8բ՝ այս նախորդի սևաթանաք արտագրությունն է, որը հետո մատիտով փոփոխված է, 394/6բ-ում այդ փոփոխություններով հանդերձ երգը թանաքով արտագրված է: Տարբերությունները հիմնականում երգի և կրկներգի հարաբերության մեջ են. 396-ում «Մտա բլբուլի բաղը» խոսքերը նորից մտցված են կրկներգի մեջ, իսկ 423 և 394-ում դարձյալ առանձնացված են որպես երգի հիմնական մաս: 394-ի կրկներգում տենորը և բասը նախապես նման են եղել 396-ի նույն տեղին, հետո մատիտով շատ որոշակի փոխել է: 396 և 394-ը, որպես ամբողջական արժեքավոր դաշնակումներ, բերված են Տարբերակներում (Բ և Գ): Խոսքերը լրացված են ՁՏ-ից:

402/57-ում, որ Պոլսի շրջանի ձեռագիր է, Կոմիտասը նորից վերադարձել է սկզբնական ցած տոնայնությանը (**առ մաժոր**): Ամենայն հավանականությամբ այդ փոփոխությունը կապված է «Հոյ նապաս» երգի տոնայնության հետ (**մի մինոր**), որին

կից երգվել է «Փափուրի»-ն 1911 թվականի ապրիլի 2-ի Յունիոն Ֆրանսեզի համերգում. ի դեպ, 402 ծոցատետրում «Փափուրի»-ն այդպես էլ գրված է եռաձայն արական «Հոյ Նապան»-ից (ԵԺ II, էջ 78 և 246) հետո: Ներդաշնակությունն ու ռիթմը փոքր տարբերություններ ունեն նախորդներից, կառուցվածքն ընդարձակված է: Խոսքերը գրված չեն. վերականգնեցինք ՁՏ I-ից, որ լույս է տեսել այն համերգի առթիվ, որտեղ կատարվել է այս մշակումը: Բերվում է Տարբերակներում (Դ):


437՝ նախապես (գուցե դեռևս Էջմիածնում) թանաքով գրված հինգ-ձայնը հետո մատիտով, հայկական ձայնանիշերով դարձված է յոթձայն: Ներդաշնակությունը, ռիթմը և ընդհանուր հնչողությունն անհամեմատ հարուստ են, խմբերգին բուրատեսակ գունավորություն են տալիս կոմիտասյան կվարտկվինտակորդները, կառուցվածքն էլ փոխված է՝ «Մտա բլբուլի բաղը, երգեցի անուշ տաղը» խոսքերը մտցված են կրկներգի մեջ, այսինքն՝ այստեղ խմբերգն ընդունել է այն կառուցվածքը, ինչպես կատարվել է Պոլսում վերոհիշյալ համերգին և այդ առթիվ խոսքերը կետեղվել են ՁՏ I-ում: Ավելացված ձայները հայկական ձայնանիշերից փոխադրված, երգը լրիվ վիճակում բերված է հատորի հիմնական մասում, որպես ուշ շրջանի վերջնական տարբերակ:

Նույն 437-ի նախնական սևաթանաք հինգձայն շարադրության մեջ, որտեղ վերջնականի 2-րդ սոպրանոն և 1-ին բասը չկան, 2-րդ տենորի մասը այլ, ոչ պակաս հետաքրքրական շարադրություն ունի: Այսպիսով, հինգձայն վիճակում է. 437-ի տարբերակը իր ջահեկանությունն ունի:

437-ում 1-ին տան խոսքերը գրեթե լրիվ գրված են: Թեև պարերգային այս մեղեդիի բնական չափը 6/8 է, հեղինակն, այնուամենայնիվ, 3/4 է նշանակել, հավանաբար, կատարմանը յուրատեսակ պի-

կանտ շեշտավորում հաղորդելու նպատակով:

ՀԺԵ VIII-ում «Փափուրի»-ն տպագրված է Վ. Սարգսյանի՝ հիշողությամբ վերականգնած տարբերակով, որն իր կառուցվածքով նման է վերը նկարագրված վերջին տարբերակին, ներդաշնակությամբ՝ 402-ին, բայց ընդհանուր առմամբ պարզեցված է, կրկնությունները պակասեցված և ամբողջությունն ավելի հավաք է: Կրկներգի՝ կրկնության սկզբում մեղեդին բնորոշ կվարտային թռիչք ունի: Բնագրերից ոչ մեկում այդ վերին հնչյունը չկա, հնարավոր է, որ կատարման ընթացքում է գոյացել: Նախկին **դո մաժոր** տոնայնության վերականգնումը թելադրված է նրանով, որ Պոլսի համերգներում «Փափուրի»-ն երգվել է «Անձրևն եկավ»-ին (ԵԺ II, էջ 23 և 226) կից: Ստորև բերված է ՀԺԵ տարբերակը:



68. Ինչո՞ւ Բինգյոլը մտար և Սուսան սմբուլ. Բնագրերը Էջմիածնի վաղ և Պոլսի շրջանի են: 391/25-ում 405-ի սնագրությունն է, բայց «Սուսան սմբուլ»-ը չկա: 405/3բ-ում (Էջմիածնական վաղագույն շրջան) ավարտված քառաձայն, պարզ հարմոնիկ ներդաշնակում է, 403/34-ում (Պոլսի շրջան) պոլիֆոնիկ դաշնակման անավարտ փորձ է, մասնավորապես՝ «Ինչու Բինգյոլը» հատվածը երկձայն օկտավային կանոնով է գրված: 407/17—29 էջերում կա մշակման հինգ շարադրություն, չորսն անավարտ, հինգերորդն ավարտված, որ 404-ի սնագրությունն է: 404/1-ում վերջնական մշակումն է, մատիտով մաքուր արտագրված:

405/3բ պարզագույն տարբերակը, գրված դիսկանտներով արական աշակերտական խմբի համար, կվետեղվի համապատասխան հատորում: Դրա և 404/1-ի համեմատությունը Կոմիտասի խմբերգային գրության վարպետության զարգացման մասին չափազանց վառ պատկերացում է տալիս: 404/1-ը բերված է հատորի հիմնական մասում:

407-ից 404-ում երգն արտագրելիս հեղինակը որոշ փոփոխություններ է արել: «Սուսան սմբուլ»-ի կողքին նշել է՝ «մերկ է» (ի նկատի ունի երկրորդ նախադասությունը) և դրա փոխարեն գրել է քառաձայն մի նոր տարբերակ, տպրանոների և բասերի, ալտերի և տենորների օկտավային վուգահեռ ընթացքով, որի կողքին նշել է՝ «լավն է»: Այդ նոր հատվածն իր հարմոնիայի յուրատեսակությամբ հիրավի ավելի համապատասխան է հումորիստական երգին: «Սուսան սմբուլ»-ի նախկին տարբերակը, իր փոքր-ինչ հանդիսավոր, կրկնապատկված քառաձայն լիահնչուն վերջավորությամբ, որ նույնպես վուրկ չէ գեղարվեստական հետաքրքրականությունից, բերված է հատորի հավելվածում:

Բնագրում, առաջին երգի («Ինչու Բինգյոլը մըտար») 2-րդ տան խոսքերի համար կա մի երկտող, բայց դասավորումը որոշակի չէ: Հնարավոր է երկու ձև.


ա. Ինչո՞ւ Բինգյոլը մըտար,
Բաղի բիլբուլը գըտար:
Ինչո՞ւ մեզ չըլըսեցիր,
Ճակատիդ մուր քըսեցիր:


բ Ինչո՞ւ Կարոյին առար,
Անտեր ու գերի դառար:
Ինչո՞ւ մեզ չըլըսեցիր,
Ճակատիդ մուր քըսեցիր:

Ցույց չի տրված նաև կրկնության տեղը, (հնարավոր տարբեր ձևերից ամենից հավանական կլիներ՝ 2-րդ տունը սկսել նախքան «Սուսան սմբուլ»-ին անցնելը): Բոլոր տվյալներից երևում է, որ այս երգում 2-րդ տուն չի կատարվել:

ՀԺԵ VI-ում վետեղված է Վ. Սարգսյանի՝ հիշողությամբ վերականգնած «Ինչո՞ւ Բինգյոլը»: Այս տարբերակը թեև կոմիտասյան ոճի և իր ընդհանուր գեղարվեստականության տեսակետից որևէ առարկության տեղիք չի տալիս, բայց հեղինակի բնագրից բավական մեծ տարբերություն ունի: Բացառված չէ, որ Կոմիտասը իր վերջնական մշակումը խմբին սովորեցնելիս տեղն ու տեղը նորից փոփոխել, պարզեցրել է: Նյութերից դատելով, պակաս հավանական է ենթադրել, որ նա գրի առած վիճակում ունեցել է նաև այդ տարբերակը (բերվում է ստորև):





ին-չո՞ւ Կա - րո - ին ա - ռար աց-տեր ու գե - րի դա - ռար։
բյուլ-բյուլ գը-տար։
p cresc.
Տը-լե,մ՚ը
Giocoso - Ջմայքոտ և զվարթ
p cresc.
Տը-լե,մը կոճ - տե. Ա-բոճ բը՚խ կոճ - տե.
p cresc.
Թըխ կոճ-տե. բը՚խ կոճ տե. տը-լե մը կոճ տե. Ա - բոճ բը՚խ կոճ - տե.
կոճ - տե. Ա բոճ բը՚խ կոճ տե. բը՚խ կոճ-տե. բը՚խ կոճ-տե.
Տըլե մ՚ը կոճ-տե.
f
բը՚խ կոճ,բը՚խ կոճ, բը՚խ կոճ - տե. Ա-բոճ կոճ - տե, բը՚խ կոճ-տե։
f
բը՚խ կոճ,բը՚խ կոճ, բը՚խ կոճ - տե, Ա-բոճ, տը լե մ՚ը կոճ-տե. բը՚խ կոճ-տե։
f
բը՚խ կոճ բը՚խ կոճ, բը՚խ կոճ - տե.կոճ-տե. Ա-բոճ, տըլե մ՚ը կոճ-տե. բը՚խ կոճ-տե։
f
բը՚խ կոճ բը՚խ կոճ, բը՚խ կոճ - -տե. Ա-բոճ կոճ - տե. կոճ-տե. դը-լե.մ՚ը կոճ-տե։



«Ինչո՞ւ Բինգյոլը» ժողովրդական երեք երգերի միացում է, Պոլսի 1913 թվականի հունիսի 15-ի համերգի հայտագրում այն նշված է երկրորդ երգի՝ «Հապոն կոնիե» անունով, կատարվել է «Խումար» խմբերգին կից:

69. **Էս առուն ջուր է գալիս.** Բնագրերն են՝ 405/7 (2 տարբերակ), 468, 398/21, 22բ, 23, 27, 396/1բ, 2, 423/1 (հին գրվածը), 10բ 394/6, 423/1 (նոր գրվածը), 442/51բ (միայն մեղեդին), 407/16, 51 և 404/14:


405/7-ը ամենատպագրականն է՝ մայր մեղեդիի երկու տարբերակով, որ համապատասխանում են Ա՛ժ I-ի բնագրում (302, էջ 54, № 234) եղող հինգ տարբերակներից 2-րդին (Սուրմալուի) և 3-րդ—4-րդին (Ապարանի, կա նաև Շիրակի), թեև այս դաշնակումները Ա՛ժ բնագրի այդ հատվածից վաղ են արված: Հետագա տարբերակներէ՛ հետ համեմատելու համար 405/7-ի առաջին տարբերակը բերվում է ստորև:




Էջմիածնական վաղ շրջանում արված այսպիսի փորձերում, հիմնվելով մեղեդիի դաշնակման խորալային սկզբունքի վրա, բայց ձգտելով խմբի ձայներին, հնարավորին չափ ինքնուրույնություն հաղորդել (այս օրինակում դա առանձնապես ակնառու է), Կոմիտասն, այնուամենայնիվ գեղարվեստական նշանակալից խնդիրներ դեռևս չի դրել իր առաջ: Չնայած դրան, այս տարբերակն ևս կատարման նյութ կարող է դառնալ և կկետեղվի դպրոցական երգեցողության համար արված մշակումների մեջ: Այս առաջին ներդաշնակման պահվող ձայնն ու տրիոլային շարժումը բավմսական ձևերով գործադրված են հետագա բոլոր տարբերակներում, որոնցից յուրաքանչյուրն իր նախորդի վարգացումն է:

468-ը պարտիտուրային էջի վրա այլ երգերի հետ գրված սևագիր փորձ է, որ դաշնակման տեսակետից մի անցում է 405 7-ից դեպի 398/23-ի տարբերակը և չի բերվում:

398 22բ-ում կա մատիտագիր 4-ձայն—6-ձայն ներդաշնակում **(լա-մաժոր)**, որտեղ երգի I-ին կեսում հարմոնիկ հիմնաձայներից կազմված տեսորի երգամասը խապել է, ըստ երևույթին ալտերին հանձնելու նպատակով, որպեսզի երգի I-ին կեսը հատկացնի կանանց քառաձայն խմբի: Եղած 6-ձայն կրկներգի փոխարեն 21 էջի ապատ տեղում գրել է կրկներգի երկու նոր տարբերակ, որոնք, խորալային հարմոնիայով հանդերձ, հետաքրքրական հընչում ունեն, բերվում են ստորև:



Դրանով չգոհանալով, վերադարձել է նախնականին (էջ 22բ), որը լրացումներով ու շտկումներով դո տոնայնության մեջ 23 էջում թանաքով արտագրել է, կողքին նշելով՝ «Լավն է»: Սա սկզբնական շրջանում հավանաբար երկար ժամանակ գոյություն է պահպանել իբրև միակ տարբերակ: Ջետեղված է հատորի հավելվածում (Ա): Միաժամանակ, երևի դպրոցական նպատակներով, նույն բնագրի 27 էջում գրել է հետևյալ երկձայն, պռավելագույն պարզ տարբերակը:





396/2-ը և 423/1-ը (հինը) գոյացել են նույն սկզբունքով՝ 1-ին նախադասության ձայների թիվն ավելացրել է, 2-ինը պակասեցրել: 396/2-ը իր ցածր դիրքի և թանձր «հարմոնիկ» հնչման շնորհիվ յուրահատուկ գունեղություն ունի, խաղաղ, հանգիստ տրամադրություն է ստեղծում, ինքնուրույն գեղարվեստական արժեք է պահպանում: Բերված է Տարբերակներում (Բ): 423/1-ը նախորդի փոխադրությունն է տերցիա վեր, այդ կապակցությամբ գոյացած որոշ փոփոխություններով և բարձր տեսորներով (չի բերվում):

Նույն 423 բնագրի 10բ էջում երգի 1-ին նախադասության շարադրությունը երեք անգամ փոփոխել է՝ նախ 1-ին տեսորի գիծը հանել, հետո՝ փոխել է պահված ֆիգուրը, հետո այն դարձրել 2-ձայն և 1-ին տեսորի նախկին գիծը հանձնարարել 2-րդ ալտին: Այստեղ եղող երեք տարբերակներից վերջինը, որ կրկներգում էլ փոփոխություններ ունի, բնութագրական է դիատոնիկ Ակվարտա-կվինտային հնչողություններով, բերված է Տարբերակներում (Գ):

Այնուհետև նորից վերսկսվում է շարադրության թեթևացում, ձայների պակասեցում: Գոյացել է 394/6, նույնպես դեռ Էջմիածնում գրված տարբերակը, որ 423/10բ-ի կատարելագործումն է և, որպես ավարտված լիարժեք տարբերակ, բերված է հատորի հավելվածում (Դ): Խոսքերը հեղինակի գրածն են: Հետագայում դարձյալ անդրադառնալով 423/1-ին, երգի 1-ին նախադասությունն ավելի ևս նոսրացրել է, արդեն բոլորովին «թափանցիկ» երանգ տալով՝ այնտեղից մեղեդիական որոշ գծեր դուրս թողնելով կամ այլ ձայների վերահանձնարարելով, պահված ֆիգուրը մեկ ձայնում գրելով, 1-ին նախադասությունն ամբողջությամբ հատկացրել է կանանց խմբին, գոյացել է պարզ-երկնային, իրոք մի «թափանցիկ» հնչում: 423/1 (նորը) նույնպես բերված է Տարբերակներում (Ե): Սա էջմիածնական վերջին տարբերակն է, այն գոյացել է բավական ուշ, համենայն դեպս 1908 թվականից հետո:

Պոլսում գրված տարբերակները գտնվում են վերջին ծոցատետրերում:

407/16-ում նախկին պահված ֆիգուրի փոխարեն պարտիտուրում գրված են մեղեդիական ինքնուրույնություն ունեցող տեսորային երկու գծեր, որոնք միմյանց հետ «երկախոսում» են: Այս և հաջորդ տարբերակներում հեղինակը բոլորովին հրաժարվել է կրկներգի նախկին դաշնակումից, այստեղ կրկներգը շարադրվում է նույն ձևով, ինչ որ 1-ին նախադասությունը (բուն երգը) և այդպիսով ավելի սերտ է միահյուսվում նրան: 407/16 սևագիր, բայց ավարտված տարբերակը նույնպես բերված է հավելվածում (Զ), բնագրում եղող հայկական ձայնանիշերով հավելումներն ու փոփոխությունները նկատի են առնված (բացի կրկներգում՝ ալտի հավելումից, որը Կոմիտասն ինքը իրականացրել է հաջորդ՝ 407/51 տարբերակում): Խոսքերից նշում կա միայն «լո, լո» վանկերի մասին:

Վերջին երկու տարբերակում՝ 407/51 և 404/14—15՝ երգը սկզբից մինչև վերջ հատկացված է կանանց խմբին: Պահված ֆիգուրը վերականգնված է մեկ (ստորին) ձայնում, ֆիգուրի բուն ելևէջը և խոսքային ռիթմը փոխված է, և նոր ձևով այն ավելի լավ է պատասխանում իր՝ հենց սկզբից նախատեսված նկարագրական նշանակմանը (Էս առուն ջուր է գալի...): Այդ երկու տարբերակների միջև տեսանելի տարբերությունը շատ փոքր է, սակայն այդ փոքրն էլ երգի կատարման ընթացքում գեղարվեստական (մասնավորապես՝ գունային) տարբեր էֆեկտներ առաջ բերելու հիմք կարող է տալ: 407/51-ը բերված է Տարբերակներում (Է):

404/14—15-ում, որը համեմատաբար ամենից ուշ գրվածն է, ի մի բերված և իրականացված են նախորդ մի շարք տարբերակներում ծագած մտադրությունները: Հետաքրքրական է, սակայն, որ նույնիսկ այս (քանի՞երորդ) տարբերակը, որտեղ շարադրման պարզությունն ու նպատակահարմարությունը երգի բովանդակության արտահայտման խորության և գեղարվեստական պատկերավորության հետ միասնություն են կազմում (ընդամենը մի փոքրիկ երգի մասին է խոսքը!), մաքուր գրելուց հետո դարձյալ որոշել է փոխել, կրկներգի մասը դարձյալ վերահանձնարարել խառն խմբի: Եվ երգի 2-րդ կեսում ռետինով ջնջել է 2-րդ, 3-րդ և 4-րդ ձայները: Բարեբախտաբար հին, մատիտի խոր հետքերով գրվածքը միանգամայն ապատ կարդացվում է: 404/14-ը վետեղված է այս հատորի հիմնական մասում (խոսքերը բնագրում գրված են): Քանի որ կրկներգը «ջնջելուց» հետո նոր բան չի գրել (միայն խառն խմբի ձայներն է նշել), ուստի հիմք կա պնդելու, որ սա «Էս առուն» խմբերգի վերջին տարբերակն է:

«Էս առուն» խմբերգը Պոլսի շրջանի՝ մեր ձեռք բերած հայտագրերում չի երևում, 1912 թվականի ապրիլի 1/14-ի համերգում «Ալագյազ սարն ամպել ա» մեներգին կից, «Էս առուն» կատարվել է աղջիկների երգչախմբով միաձայն, դաշնամուրով (ԵԺ I, էջ 83, 152—156 և 180): 1908 թվականի ապրիլի 4-ին Բաքվում կայացած համերգում «Էս առուն» խմբերգին կից կատարվել է «Փափուրի»-ն, 394/6-ում այդպես էլ գրված են, հավանաբար հենց այդ տարբերակն է կատարվել Բաքվում:

70. **Սանդի երգ (Ձավարծեծ)**. Բնագրերը միայն Պոլսի շրջանի տետրերում են՝ 441/35, 407/36, 404/37, 40: Մեղեդին երեք ինքնուրույն երգերի միացում է, որոնցից յուրաքանչյուրը պատկերում է ձավար ծեծելու աշխատանքի մի դրվագը: Ըստ այնմ տեմպը գնալով արագանում է (441-ում Կոմիտասը երեք երգը տառանիշերով համարակալել է):

441/35-ը մշակման առաջին տարբերակն է, 3-րդ հատվածի («Հարե՛, հա՛») բասերի մասում գրված է 1-ին տակտի ձայնահատը միայն, որ հասկացողություն է տալիս նրանց երգամասի ռիթմական պատկերի մասին: Նկատի ունենալով այս բաժնում տենորների երգամասի ռիթմը և խոսքերը, մյուս տարբերակների հիման վրա ավելացրինք բասերի ընդհատ ձայնառությունը, վերցնելով ուղիղ փակագծերի մեջ: Որպես նախնական, բայց գեղարվեստորեն ամբողջական մշակում, վետեղված է Տարբերակներում: Խոսքը լրացված է վերջնական տարբերակից:

407/36-ում որոշ փոփոխություններ կան ներդաշնակման մեջ: Մասնավորապես, սկզբում բասերի կոնտրապունկտային գծի փոխարեն աշխատանքը պատկերող ընդհատ հնչյուններ են, որ պակաս հետաքրքրական է 441/35-ից: Սկզբում նշված է՝ «I աստիճան բարձրեն» [սկսել], միջում, բասերի մոտ նշված է՝ «պատվելով, շնչով»: Այս տարբերակն ընդհանուր առմամբ ավարտված չէ, չի բերվում: Նշված մտադրությունները իրագործված են 404/37-ում, որը դարձյալ որոշ փոփոխություններով մաքրագրված է 404/40-ում, և սա երգի վերջնական, ավարտված մշակումն է, բերվում է հատորի հիմնական մասում: Երանգանիշերը հեղինակինն են: Խոսքը լրիվ գրված է մեկ տուն, կրկներգերով: Հենց այդքան էլ երգվել է Պոլսում: 1913 թվականի «Շանթ» կիսամսյա գրական-գեղարվեստական հանդեսում (№ 48, էջ 365) տպագրվել է այս երգի ժողովրդական բավական երկար խոսքեր: Կոմիտասի թղթերում (390/33) գտնվեցին հետևյալ խոսքերը, որոնք, ըստ երևույթին, ընտրված են այդ տպագրությունից.

Ո՞րն է եկել սանդի վերեն,
Լային թայեմ նստի վերեն.
Հապար բարի պաժնե վերեն,
Փունջ ըռեհան բուսեր վերեն:

Սանդն է ելեր, կերթա խռով,
Ես չեմ կրնա բռնե կռռով.
Պագ մի տու՛ձի՝ գնա բարով,
Կերթաս բարով՝ մեռնեմ սիրով:
(. . . . . .)

Սանդն է Հնդի, ծեծող չնդի,
Սանդն է կամախ, ծեծող չախմախ.
(. . . . . .)
Մեռնեմ թևին, ուժ կա ինե.
Ուժ տուր թևին, թև տա քարին,
Բերն ու բարին վեր մեր թաղին,
Քարն ու քռեն ներքի թաղին:

Վարե՛, վարե՛ վարե՛ լման —
Վարե՛ վարանդ հայո՛ւ նման:

Կատարման համար, անշուշտ, կարելի է օգտվել նաև այս խոսքերից: Կոմիտասի «Գուսան» երգչախմբի մասնակից, նրա աշակերտ Վ. Սարգսյանը այսպես է նկարագրում այդ խմբերգի կատարման ընթացքը. «Սանդի կամ Ձավարածեծի երգը Պոլսո մեջ մեր սովորածներուն ամենավերջինն էր արդարև, ու կհիշեմ, որ երգած ենք գոնե մեկ համերգի մեջ: Մեր սովորածը կբաղկանար երկու մասե, առաջինը [իմա՝ սկզբից մինչև «հապար բարի»-ի վերջը] ծանրաշուք ու լայնաշունչ, իգական ձայներուն տրված, ուր սանդի հարվածները չեշտված են ի մասնավորի արական ձայներուն կողմե: Երկրորդ մասը աշխույժ և առույգ, որուն մեջ իգական թե արական բոլոր ձայները միահամուռ կպորացնեն սանդին մեջ տրված հարվածները, սակավ արագացող ընթացքով և կրկնելով անփոփոխ նույն բառերը՝ «Վա՛րե հա՛, վա՛րե հա՛, վա՛րե հա՛, հո՛ւ հա՛»: (1966 թվականի հուլիս 12-ի նամակը Մարսելից)

Ռ. Ա. ԱԹԱՅԱՆ

СОДЕРЖАНИЕ

От редактора 5

ХОРЫ

1—6. Свадебные песни. Ряд I.

1. Еркниц, гетниц (Благословение свадебного древа) 11
2. Мерик джан алал (Прощание невесты) . . 14
3. Тагвори мэр, дус ари (Обращение к матери жениха) 16
4. Тагвор баров (Благословление жениха) . 17
5. Эн дизан (Шуточная) 19
6. Арнем эртам им яр (Плясовая) . . . 20
7. Ел, ел (Аробная) 21
8. Ай, хева, хева, сиртс (Трепещи, о, мое сердце) 23
9. Вай, лэ, лэ (Причитание) 25
10. Анден гас гех мтнис (Придя с поля, зайдешь в село) 26
11. Капут курак хецел ем (Снего жеребца оседлил) 28
12. Гутан хац ем берум (В поле обед я несу) . 30
13. Наник, нананик 32
14. Луснак сари такни (Луна за горою) . . 35
15. Екек тесек ничн э кери зинч (Из песен масленицы) 38
16. Кайнел эс канчум эл чес (Стоишь и не зовешь) 41
17. Хинг эц унем (У меня пятеро коз) . . 44
18. Зар, зынг (Воинственная плясовая) . . 47
19. Эс гишер, луснак гишер (В эту ночь, лунную ночь) 51

20—28. Свадебные песни. Ряд II.

20. Мер тагворин ничн питы (Преподношения жениху) 54
21. Гацек берек тагворамер (Преподношения родителей) 56
22. Охнял барерар аствац (Молитва, освящение свадебного древа) 60
23. Мер тагворн эр хач (Восхваление жениха) . 61
24. Эн дизан (Шуточная) 63
25. Дун алал мерик (Прощание невесты) . . 67
26. Вард, эке чем сири (Из песен невесты) . . 68
27. Егник (Из песен невесты) 70
28. Тагвори мер, дус ари (Обращение к матери жениха) 72

29—32. Армянские крестьянские песни и плясовые. Ряд I.

29. Ампел а камар-камар (Стало облачно) . 74
30. Ереван бах ем арел и Тун ари (Посадил сад в Ереване и Приди домой) 76
31. Ором-ором (Шуточная) 78
32. Арев кайнэ кесор (Когда настанет полдень) 80
33. Мер бахум нрни цар (В нашем саду гранат) 83

34—36. Песни гадания.

34. Еркнки астхер (Звезды на небе) . . 90
35. Эй, гюл ем (Эй, цветок я) 92
36. Цахнк унем нарнджи (Оранжевый цветок у меня) 94

37—43. Крестьянские плясовые. Ряд II.

37. Ярис анун Паласан (Имя моей возлюбленной — Паласан) 96
38. Ахчи, анунд Шушан (Девушка с именем Шушан) 97
39. Калери чамбин кеца (Остановился я на дороге) 99
40. Бахи пат ддум а (Тыква растет вдоль стены сада) 102
41. Пучур ахчнк севавор (Маленькая девушка в черном) 104
42. Вард а ярс (Моя возлюбленная—как роза) . 106
43. Ой им назани яр (Ой, моя грациозная возлюбленная) 107

44—49. Крестьянские песни и плясовые. Ряд III.

44. Алагяз ачерд (Глаза твои—Алагяз) . . 108
45. Сев а чобани шун (Черная собака у чебана) 110
46. Ми яр унем (У меня возлюбленный) . . 114
47. Елек тесек дус (Выйдите, взгляните) . . 115
48. Ай тха мер гехецн (Эй, парень из нашего села) 117
49. Шахкр-шухкр 119

50—56. Крестьянские плясовые. Ряд IV.

50. Сарен куга джухтм хоч (С горы спускаются два барана) 122
51. Эрвум эм (Сгораю я) 124
52. Яр джан, ари (Приди, моя возлюбленная) 125
53. Эсор урбат э (Нынче — пятница) . . . 127
54. Джур куга верин сарен (С горы струится вода) 129
55. Джахац мани-мани (Мельница) . . . 130

56. Арнем ертам эн сар (Пойду с возлюбленной на ту гору) 134

57—60. Крестьянские плясовые. Ряд V.

57. Канач арт бан ека (Поработала я на зеленой ниве) 137
58. Нор ем нор мацун мерел (Приготовила свежий мацун) 138
59. Арай, элли яр (Ты, моя возлюбленная) . 139
60. Луснак бак а брнел (Взошла полная луна) . 142

61—64. Крестьянские плясовые. Ряд VI.

61. Екан Мокац харснер (Пришли мокские невесты) 144
62. Мер бах цар а (В нашем саду деревья) . 145
63. Им чинар ярин (Моей возлюбленной как чинара) 146
64. Овн ануш (Сладостен ветерок) . . . 148
65. Ов арек, сарер джан (Дайте прохлады, милые горы) 152
66. Чинар эс, керанал ми (Ты—чинар, не гнись) 158
67. Папури (Плясовая) 160
68. Инчу Бингел мтар и Сусан смбул (Зачем ты вошла в Бингел и Сусан смбул) . . . 162
69. Эс арун джур э гали (Ручеек бежит) . . 166
70. Санды ерг (Песня ступы) 168

ВАРИАНТЫ

(8). Ай, хева, хева, сиртс (Трепещи, о, мое сердце) 173
(10). Анден гас гех мтнес (Придя с поля, зайдешь в село) 174
(12). Гутан хац ем берум (В поле обед я несу) 175
(15). Екек тесек ичн э кери зинч (Из песен масленицы) 178
(16). Кайнел ес, канчум эл чес (Стоишь и не зовешь) 180
(17). Хинг эц унем (У меня пятеро коз) . . 182
(18). Зар, зынг (Воинственная плясовая) . . 185
(19). Эс гишер, луснак гишер (В эту ночь, лунную ночь) 193
(27). Егник (Из песен невесты) . . . 194
(30). Ереван бах ем арел и Тун ари (Посадил сад в Ереване и Приди домой) . . . 195
(31). Ором-ором (Шуточная) 197
(32). Арев кайнэ кесор (Когда настанет полдень) 198
(39). Калери чамбин кеца (Остановился я на дороге) 201
(41). Пучур ахчик севавор (Маленькая девушка в черном) 202
(51). Эрвум ем (Сгораю я) 203
(52). Яр джан, ари (Приди, моя возлюбленная) 206
(53). Эсор урбат э (Нынче — пятница) . . 208
(54). Джур куга верин сарен (С горы струится вода) 210
(56). Арнем ертам эн сар (Пойду с возлюбленной на ту гору) 212
(57). Канач арт бан ека (Поработал я на зеленой ниве) 215
(58). Нор ем нор мацун мерел (Приготовила свежий мацун) 216
(59). Арай, элли яр (Ты, моя возлюбленная) . 219
(62). Мер бах цар а (В нашем саду деревья) . 221
(63). Им чинар ярин (Моей возлюбленной как чинара) 222
(64). Овн ануш (Сладостен ветерок, . . 223
(66). Чинар эс, керанал ми (Ты—чинар, не гнись) 229
(67). Папури (Плясовая) 239
(68). Инчу Бингел мтар 242
(69). Эс арун джур э гали (Ручеек бежит) . 243
(70). Санды ерг (Песня ступы) 249
Комментарии (Р. Атаяна) 253

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից 5

ԽՄԲԵՐԳԵՐ

1—6. Հարսանեկան երգեր. Շար Ա.

1. Երկնից, գետնից 11
2. Մերիկ ջան հալալ 14
3. Թագվորի մեր, դուս արի 16
4. Թագվոր բարով 17
5. Էն դիպան 19
6. Առնեմ երթամ իմ յարը 20

7—8. Ել, ել (Սայլի երգ)

7. Ել, ել (Սայլի երգ) 21
8. Այ, հեվա, հեվա, սիրուս 23
9. Վայ, լե, լե (Ողբերգ) 25
10. Հանդեն գաս գեղը մտնես 26
11. Կապուտ քուռակ հեծել եմ 28
12. Գութանը հաց եմ բերում 30
13. Նանիկ, նանանիկ 32
14. Լուսնակը սարի տակին 35
15. Եկեք տեսեք ինչն է կերի սինչ 38
16. Կայնել ես կանչում էլ չես 41
17. Հինգ էծ ունեմ 44
18. Ջար, կընգը 47
19. Էս գիշեր, լուսնակ գիշեր 51

20—28. Հարսանեկան երգեր. Շար Բ.

20. Մեր թագվորին ինչ պիտի 54
21. Գացեք բերեք թագվորամեր 56
22. Օրհնյալ բարերար աստված 60
23. Մեր թագվորն էր խաչ 61
24. Էն դիպան 63
25. Դուն հալալ մերիկ 67
26. Վարդ, պըճ չըմ սիրի 68
27. Եղնիկ 70
28. Թագվորի մեր. դուս արի 72

29—32. Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Ա.

29. Ամպել ա կամար-կամար 74
30. Երևան բաղ եմ արել և Տուն արի 76
31. Հոռոմ-հոռոմ 78
32. Արևը կայնե կեսօր 80
33. Մեր բաղումը նոնի ծառ (Հոդալը) 83

34—36. Վիճակի երգեր

34. Երկնքի աստղերը (Սկյա, սկյա) 90
35. Հեյ, գյուլ եմ 92
36. Ծաղիկ ունեմ նարնջի 94

37—43. Հայ գեղջուկ պարերգեր. Շար. Բ.

37. Յարիս անուն Պալասան 96
38. Աղջի, անունդ Շուշան 97
39. Կալերի ճամբին կեցա 99
40. Բաղի պատը դղում ա 102
41. Պուճուր աղջիկ սնավոր 104
42. Վարդ ա յարս 106
43. Հոյ իմ նապաստի յարը 107

44—49. Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Գ.

44. Ալագյալ աչերդ 108
45. Սև ա չորանի չուխը 110
46. Մի յար ունեմ 114
47. Եկեք տեսեք դուսը 115
48. Այ տղա մեր գեղեցի 117
49. Շախկր-շուխկր 119

50—56. Հայ գեղջուկ պարերգեր. Շար Դ.

50. Սարեն կուգա ջուխտ'մ դոշ 122
51. Էրվում եմ 124
52. Յար ջան, արի 125
53. Էսօր ուրբաթ է 127
54. Ջուր կուգա վերին սարեն 129
55. Ջաղացը մանի-մանի 130
56. Առնեմ երթամ էն սարը 134

57—60. Հայ գեղջուկ պարերգեր. Շար. Ե.

57. Կանաչ արտը բան եկա 137
58. Նոր եմ նոր մածուն մերել 138
59. Հարայ, էլի յար 139
60. Լուսնակը բակ ա բռնել 142

61—64. Հայ գեղջուկ պարերգեր. Շար Զ.

61. Եկան Մոկաց հարսներ (Հարալո) 144
62. Մեր բաղը ծառ ա 145
63. Իմ չինար յարին 146
64. Հովն անուշ (Արարատյան գիշեր) 148
65. Հով արեք, սարեր ջան 152
66. Չինար ես, կեռանալ մի 158
67. Փափուրի 160

68. Ինչո՞ւ Բինգյոլը մտար և Սուսան սմբուլ . . 162
69. Էս առուն ջուր է գալի 166
70. Սանդի երգ (Շավարծեծ) 168

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

(8). Ալ, հեվա, հեվա, սիրտս 173
(10). Հանդեն գաս գեղը մանես 174
(12). Գութանը հաց եմ բերում 175
(15). Եկեք տեսեք ինչն է կերի պինչ . . . 178
(16). Կայնել ես կանչում էի չես 180
(17). Հինգ էծ ունեմ 182
(18). Ջար, ղընգը 185
(19). Էս գիշեր, լուսնակ գիշեր 193
(27). Եղնիկ 194
(30). Երևան բաղ եմ արել և Տուն արի . . . 195
(31). Հոռոմ-հոռոմ 197
(32). Արևը կայնե կեսօր 198
(39). Կալերի համբին կեցա 201
(41). Գուճուր աղչիկ սևավոր 202
(51). Էրվում եմ 203
(52). Ցար չան, արի 206
(53). Էսօր ուրբաթ է 208
(54). Ջուր կուգա վերին սարեն 210
(56). Առնեմ երթամ էն սարը 212
(57). Կանաչ արտը բան եկա 215
(58). Նոր եմ նոր մածուն մերել 216
(59). Հարայ, էլի չար 219
(62). Մեր բաղը ծառ ա 221
(63). Իմ չինար յարին 222
(64). Հովն անուշ 223
(66). Չինար ես 229
(67). Փափուրի 239
(68). Ինչո՞ւ Բինգյոլը մտար 242
(69). Էս առուն ջուր է գալի 243
(72). Սանդի երգ (Շավարծեծ) 249

Ծանոթագրություններ (Ռ. Աբայանի) . . 253

Հրատ. խմբագիրներ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ,
Լ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ
Նկարիչ՝ Ռ. ԲԵԴՐՈՍՅԱՆ
Պետ. խմբագիր՝ Հ. ԱՍԱՏՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Վ. ԱՋԱՏՅԱՆ

9—3—4

ՎՖ 07675 Պատվեր՝ 1016 Տիրաժ՝ 5000

Հանձնված է արտադրության 10/IV 1969 թ. Ստորագրված է տպագրության 5/IX 1969 թ.
Թուղթ՝ օֆսեթ 60×92¹/₈։ Հրատ. 32,4 մամ., + 1 ներդիր տպագր. 38,5 մամ. Գինը՝ 4 ռ. 86 կ.
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության
գլխավոր վարչության Հակոբ Մնդասարյան անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։





ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.
FL0069181